

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Քաղաքական Յայտարարութիւնը

«Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդատու մարմինն է, որը քննարկում է Հայ Եկեղեցու վարչական, կազմակերպչական, մշակութային, տնտեսական եւ շինարարական հարցերը», գրուած է Մայր Աթոռի կայքէջին վրայ:

Ինչպէս կը տեսնենք, յիշուած հարցերու շարքին կը բացակայի քաղաքականը, սակայն Մայիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ գումարուած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ընդլայնուած կազմով ժողովի աւարտին հրապարակուած յայտարարութիւնը (տես էջ 6) իր բովանդակութեամբ ամբողջովին քաղաքական է եւ կարծեք թէ, գրուած է Երեւանի փողոցներուն վրայ ընդդիմութեան գործողութիւններուն սատարելու նպատակով:

Նախքան ժողովը հրապարակուած տեղեկատուութեան մէջ կը յայտնուէր թէ, քննութեան պիտի առնուին Մայր Տաճարի ամրակայման եւ հիմնանորոգութեան ընթացքին, Միւռնօսիոնութեան կազմակերպման, Հայաստանի ու Արցախի մէջ տիրող իրավիճակին, Հայաստանի եւ Արցախի թեմերէն ներս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցոյ կրթադաստիարակչական առաքելութեան, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցու վարչական, կանոնական ու հովուական կեանքին առնչուող հարցեր:

Յուսանք որ, այդ բոլոր հարցերը քննարկուած են ժողովականներուն կողմէ, սակայն անոնց մասին եզրափակիչ յայտարարութեան մէջ անդրադառնալը պատեհ չէ նկատուած, ու կեդրոնացումը ամբողջութեամբ եղած է Հայաստանի ու Արցախի մէջ տիրող քաղաքական իրավիճակներուն վրայ՝ տողատակերով քննադատութեան ենթարկելով Հայաստանի կառավարութեան վարած քաղաքականութիւնը ու մօտաւորապէս կրկնելով ընդդիմութեան տեսակետները:

Հայ Եկեղեցին ապաքաղաքական հաստատութիւն ըլլալով հանդերձ մեր ազգային կարեւորագոյն կառոցներէն մին է եւ իրաւունք ունի տեսակետ յայտնելու եւ յորդորելու Հայ ժողովուրդի գաւակները՝ ընդհանրական հարցերու շուրջ: Սակայն խնդրայարոյց կը դառնայ, երբ Եկեղեցին մուտք կը գործէ քաղաքականութեան արաւետներէն ներս ու կը սկսի սլաքները ուղղել հակադիր կողմերէն մէկուն՝ ի նպաստ միւս կողմին:

## Փաշինեան-Միշել-Ալիեւ Զանդիպոլմ Պրիւքտէի Մէջ Քննարկուած ԵՆ Լեռնային Ղարաբաղի Տագնապի Վերաբերող Հարցեր

Մայիս 22-ին Պրիւքսէլի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի եւ Ատրպէյճանի Հանրապետութեան նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը:

Քննարկման հետեւանքով պայմանաւորուածութիւններ ձեռք բերուած են տարածաշրջանային հաղորդակցութիւններու բացման ուղղուած աշխատանքներու հետագայ ընթացքի, սահմաններու սահմանազման ու անվտանգութեան հարցերով յանձնաժողովի աշխատանքներու մեկնարկին վերաբերեալ:

Քննարկման առարկայ դարձած են նաեւ երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման բանակցային գործընթացի նախապատրաստութիւններուն, մարդասիրական խնդիրներուն, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրի կարգաւորման վերաբերող հարցեր:



Փաշինեան, Միշել, եւ Ալիեւ կը հանդիպին Պրիւքսէի մէջ

Պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է շարունակել եռակողմ հանդիպումները՝ նախատեսելով նմանատիպ հանդիպում կայացնել Յուլիսին կամ Օգոստոսին:

Յառաջիկայ օրերուն տեղի պիտի ունենայ Հայաստանի ու

Ատրպէյճանի միջեւ սահմանազման ու սահմանի անվտանգութեան հարցերով համատեղ յանձնաժողովի առաջին նիստը, Պրիւքսէլի մէջ յայտարարեց Եւրոպական Խորհուրդը:

## ՄԴԿ Յայտարարութիւնը՝ Հայաստանի Մէջ Տեղի Ունեցող Իրադարձութիւններուն Կապակցութեամբ

Սփիւռքահայութիւնը ընդհանրապէս եւ Ամերիկահայութիւնը մասնաւորապէս մօտէն կը հետեւին Հայրենիքի մէջ այս օրերուն տեղի ունեցող իրադարձութիւններուն, ուր խումբ մը ընդդիմադիրներ հանրահաւաքներու, երթերու եւ փողոցային այլ միջոցառումներով կը փորձեն հասնիլ վարչապետին ու կառավարութեան հրաժարականին: Ժողովրդավարութեան ընձեռած իրաւունքները օգտագործելով՝ բողոքարարները առիթը կ'ունենան ազատօրէն արտայայտելու իրենց տեսակետները ու զանոնք հասցնելու ժողովուրդին: Սակայն շատ յաճախ նոյն այդ ցուցարարները կ'անտեսեն իրենց տեսակետները չբաժնող քաղաքացիներու իրաւունքները, միջադէպեր կը ստեղծեն իրաւապահներուն հետ, իսկ հարթակէն կը հնչեն այլակարծութիւնը ժխտող, մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող ու ատելութիւն սերմանող ելոյթներ:

Անցնող մօտ մէկ ամսուան ընթացքին ընդդիմութեան գործողութիւնները եկան աւելի քան յստակ դարձնելու, որ Հայաստանի ժողովուրդին մեծամասնութիւնը չի բաժնէր իրենց տեսակետները: Շատեր նոյնիսկ կը պահանջեն, որ իշխանութիւնները դիմեն աւելի կտրուկ միջոցներու՝ ապահովելու համար ազատ տեղաշարժելու իրենց իրաւունքը:

Վերջին օրերուն, ընդդիմադիր շրջանակները կը փորձեն այնպէս ներկայացնել, որ իբրեւ թէ Սփիւռքը կը սատարէ իրենց շարժումին եւ որոշ լրատուամիջոցներ ապատեղեկատուութիւն կը տարածեն այդ ուղղութեամբ:

Ելլելով վերոյիշեալէն՝ կ'ուզենք ընել հետեւեալ յստակացումները. Ա.- Սփիւռքը միատարր զանգուած չէ եւ չէ եղած երբեք: Հոն կը գործեն տարբեր կուսակցութիւններ, կազմակերպութիւններ եւ ժողովրդային շերտեր: Հետեւաբար, որեւէ կազմակերպութիւն իրաւունք չունի խօսելու ամբողջ Սփիւռքահայութեան եւ յատկապէս Ամերիկահայութեան անունով:

Բ.- ԱՄՆ-ի դեսպանին դէմ տարուող արշաւը եւ զայն ետ կանչելու պահանջները չեն ներկայացներ մեր կուսակցութեան եւ Ամերիկահայութեան մեծամասնութեան տեսակետը: Մենք կը գտնենք, որ ԱՄՆ-ի դեսպանը լիովին կը կատարէ իր պաշտօնը եւ

## Փաշինեան Եւ Պլինքըն Զեռախօսազրոյց Ունեցած ԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ պետական քարտուղար Էնթրէյ Պլինքընի հետ:

Պետական քարտուղարը բարձր գնահատած է տարածաշրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելուն ուղղուած ՀՀ կառավարութեան ջանքերը, ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներուն ընթացքը:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրի կարգաւորման, տարածաշրջանային անվտանգութեան հարցերու վերաբերեալ:

Վարչապետ Փաշինեանը տպաւորութիւնները կ'իսած է Մայիս 22-ին Պրիւքսէլի մէջ տեղի ունեցած եռակողմ հանդիպման վերաբերեալ, ընդգծելով, որ թէեւ հանդիպումը, ընդհանուր առմամբ, դրական կը գնահատէ, սակայն անկէ յետոյ ցաւօք հնչած են քննարկումներու բովանդակութեան հետ կապ չունեցող մեկնաբանութիւններ:

Պետական քարտուղարը վերահաստատած է ԱՄՆ պատրաստակամութիւնը՝ շարունակելու աջակցութիւնը Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներուն, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրի կարգաւորման, Հայաստանի



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ԷԱՅԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՒՔԵԱՆ ՏՐԱՆՍԲԱՆՈՒՔԵԱՆ ՄԵՉ

### ԱՐՄԵՆ ՎԱՐՈՎԱՆԵԱՆ

Այն ժամանակ, երբ Հին աշխարհամասի երկրների ուշադրությունն ու ռեսուրսներն ուղղված են Ուկրաինայի ճգնաժամի լուծմանը եւ դրա հետեւանքների դէմ պայքարին, Եւրոպայի խորհրդի մեծ ուշադրութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի փոխյարաբերութիւններին բաւական խօսուել փաստ է: Մնում է յուսալ, որ այն Եւրոպա-Ռուսաստան ոչ դրական յարաբերութիւնների ներքոյ մրցակցութեան հերթական ճակատի չի վերածուի: Այս պահին ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախարհական երեք ուղղութիւններին էլ հնչում են նոյնաբովանդակ յայտարարութիւններ, ըստ որոնց՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնները պէտք է արագ կարգաւորուեն: Բոլոր երեք ուղղութիւններում էլ ընդունում են, որ արցախեան հակամարտութիւնը լուծուած չէ, այն պէտք է արուի քաղաքական բանակցութիւնների ընթացքում Արցախի Հանրապետութեան կարգավիճակը որոշելով: Հայ-ատրպէյճանական յարաբերութիւնների կարգաւորման նպատակով երկու ամսուայ ընթացքում Բրիւսելում երկրորդ եռակողմ հանդիպումն է կազմակերպուել Նիկոլ Փաշինեանի, Շառլ Միշելի եւ Իլհամ Ալիեւի միջեւ: Կիրակի օրը՝ Մայիսի 22-ին, ՀՀ վարչապետն աշխատանքային այցով կը մեկնի Բրիւսել եւ նոյն՝ հանգստեան օրը կը հանդիպի Շառլ Միշելի հետ: Եռակողմ հանդիպումը նախատեսուել է անցկացնել Երկուշաբթի՝ Մայիսի 23-ին: Ապրիլի 6-ին կայացած նախորդ բրիւսելեան հանդիպման ժամանակ Շառլ Միշելի միջնորդութեամբ երկու հարցի վերաբերեալ էր կայացուել է որոշում: Առաջինով երկու երկրների արտաքին գործերի նախարարներին յանձնարարուել էր սկսել ապագայ խաղաղութեան պայմանագրի նախապատրաստական աշխատանքները եւ այդ ուղղութեամբ ձեռնարկել բանակցութիւններ ու

չփուժներ: Հանդիպման յաջորդ օրը Նիկոլ Փաշինեանը պարզաբանեց, որ խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ Հայաստանի ու Ատրպէյճանի ներկայացրած սկզբունքները, հարցերը պէտք է իմի բերուեն եւ բանակցութիւնների արդիւնքներով հասցէագրուեն: Ի դէպ, խօսքը Ատրպէյճանի ներկայացրած 5 սկզբունքների եւ Հայաստանի դրական արձագանքի հետ ներկայացրած Արցախի Հանրապետութեան ժողովրդի անվտանգութեան երաշխիքների, նրանց իրաւունքների ու ազատութիւնների պաշտպանութեան, ինչպէս նաեւ Արցախի վերջնական կարգավիճակի ճշգրտման հիմնարար սկզբունքների մասին է: Բրիւսելում ձեռք բերուած երկրորդ որոշմամբ մինչեւ Ապրիլի վերջ Հայաստան-ատրպէյճան սահմանների ճշգրտման հարցերով պէտք է ստեղծուէր երկկողմ յանձնաժողով, որն ունենալու էր կրկնակի մանդատ՝ բուն սահմանագծման եւ սահմանի երկայնքով անվտանգութեան ու կայունութեան ապահովման նպատակով: Ամենայն հաւանականութեամբ, բրիւսելեան հերթական հանդիպման օրակարգը նոյնն է լինելու, առաւել եւս, որ այդպէս էլ չի յաջողուել կազմակերպել սահմանագծման եւ սահմանագծման հարցերով աշխատանքային խմբի հանդիպումը: Ալիեւը յանձնաժողովի հանդիպման ձախողման մէջ մեղադրեց Հայաստանին, բայց ՀՀ ԱԽ քարտուղար Արմէն Գրիգորեանի եւ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանի յայտարարութիւնների ենթատեքստից պարզ է դառնում, որ ատրպէյճանական կողմը պատրաստ չի եղել հանդիպմանը՝ իրաւական հիմքերի փոխարէն, ամենայն հաւանականութեամբ, կրկին փորձելով քննարկման օրակարգ բերել առաւելապաշտական առաջարկներ, որոնք պարբերաբար հնչում են պաշտօնական Բաքուից եւ յայտնի են բոլորին:

Շար.ը էջ 7

## Այս Ցոյցերով Իշխանափոխութիւն Զի Լիճի

### ԱՐԱՍ ԱՐՈՎԱՍՅԱՆ

Թող ինձնից չնեղանան յարգարժան ընդդիմադիրները, բայց մարդիկ, որոնց ես հանդիպում եմ փողոցում, հիմնականում բողոքում են ցուցարարներից, իսկ ոմանք նրանց անուանում են «քոչարեանականներ»: Այսօր մի կին, նոյն դժգոհութիւնները կրկնելով, ինձ ասաց, որ ամէն օր աղօթում է Փաշինեանի համար, որ Աստուած նրան իմաստութիւն տայ, եւ նա կարողանայ երկիրն այս վիճակից դուրս բերել: Ենթադրում եմ, որ նա նախկինում էլ է նման աղօթքներ արել, բայց դրանք ակնյայտօրէն տեղ չեն հասել, որովհետեւ ներկայիս վարչապետն արդէն իսկ հասցրել է երկիրն այս վիճակին: Ընդհանուր առմամբ՝ կարող եմ արձանագրել, որ մինչեւ 2018 թուականը փողոցում ինձ հանդիպած քաղաքացիներն անիծում էին Հայաստանի ղեկավարներին՝ յիշում եմ, տաքսիստներից մէկը նոյնիսկ հրաժարուեց ինձ տանել Հիւսիսային պողոտայ, ասելով՝ «քեզ շատ եմ յարգում, բայց էդ դարաբաղցիների որջը ես չեմ քշելու»: Իսկ հիմա վերաբերմունքն առաջին դէմքի հանդէպ, գոնէ իմ փորձից ելնելով, դրական է, եւ ամենադառը բանը, որը ես լսել եմ «բայ ինչ անէր էդ խեղճ տղան (կամ մի քիչ ատելի կոպիտ բառեր)» արտայայտութիւնն է: Իհարկէ, սա սոցիոլոգիական հարցում չէ, բայց, միւս կողմից, չի կարող պատահել, որ 30 տարուայ ընթացքում ինձ հանդիպէին յատուկ ընտրուած մարդիկ, որոնք ինչ-որ ուղղորդուած տեսակէտ են ներկայացնում: Դուք գուցէ կ'ասէք, որ մարդիկ գտնում են «հ1»-ի քարոզչական ազդեցութեան տակ: Բայց ես դրան կարող եմ պատասխանել, որ «հ1»-ը ճիշտ նոյն ձեւով խիստ դրական լոյսի տակ ներկայացնում էր նաեւ Սերժ Սարգսեանի ու նրա թիմի գործունէութիւնը, եւ դրան ոչ ոք չէր հաւատում: Աւելին՝ նախորդ ղեկավարի ժամանակ ընդդիմադիր հեռուստատարիքներ

չկային, իսկ հիմա կան: Այնպէս որ՝ քարոզչութիւնն այստեղ կապ չուներ: Թէ ինչու է հայաստանցիների զգալի մասը սիրում ձախողուած, պատերազմում պարտուած ղեկավարին՝ դա դեռ երկար ենք վերլուծելու: Բայց փողոցային բողոքներ կազմակերպող ընդդիմադիրները պէտք է գիտակցեն իրականութիւնը, ոչ թէ ասպրեն պատրանքներով, թէ իբր «ժողովուրդը ոտքի է կ'անգնել»:

Քաղաքացիները նաեւ հարցնում են ինձ՝ «նիկոլը չի թողի, չէ՞», որ սրանք գանձ: Ճիշտն ասած՝ որեւէ մէկին յուսադրելու կամ, հակառակը, հիասթափեցնելու գործառույթներ ես իմ վրայ չեմ վերցնում: Բայց ես իսկպպէս կարծում եմ, որ ա'յս ցոյցերով իշխանափոխութիւն չի իրականացուի: Դա չի նշանակում, որ Փաշինեանի իշխանութիւնը յաւերժ է: Իշխանափոխութիւն կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ ներկայիս վարչապետն այլեւս ոչ մէկին՝ ոչ Արեւմուտքին, ոչ Ռուսաստանին պէտք չլինի (ակնյայտ է, որ հիմա երկուսին էլ պէտք է՝ դրա համար էլ նրան բոլոր կողմերից աջակցում են): Փաշինեանը պէտք չի գալու այն ժամանակ, երբ անի իրենից սպասուող քայլերը՝ Ատրպէյճանի եւ Թուրքիայի հետ յարաբերութիւններում: Իսկ դա, վախենամ, Հայաստանը կը դնի աւելի ծանր վիճակի մէջ, քան այսօր է: Եւ այդ դէպքում մոլորուած մարդիկ գուցէ հասկանան, որ սխալուել են:

«ԱՌԱԻՕՏ»

## ԻՆՉ Է ՈւՂՈՒՄ ԸՆԴՊԻՄՈՒՔԻՆԸ Եւ ԻՆՉՈՒ ԶԳՆԱԳ Քաղաքական Պարզ Տեխնոլոգիայի Կիրառման

### ՄՈՎՍԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Արցախի փրկութեան օրհասական պահանջով Ազգային ժողովից փողոց տեղափոխուած ընդդիմութիւնը շարունակում է Երեւանի փողոցներում ակցիաների իրականացումը՝ ըստ էութեան շեղուելով այն օրակարգից, ինչի համար յայտնուել է փողոցում:

Ընդդիմադիրները, երբ դուրս եկան փողոցային պայքարի, յայտարարեցին, թէ իշխանութիւնն Արցախի հարցով ոչ հայանպաստ գործընթացների մէջ է մտել՝ վկայակոչելով Նիկոլ Փաշինեանի՝ Արցախի կարգավիճակի նշաձողն իջեցնելու մասին յայտնի յայտարարութիւնը, ու որ Արցախի փրկութեան համար իրենք ձեւակերպում են գործող իշխանութիւնների հեռացման պահանջ:

Մի կողմ թողնենք հանգամանքը, որ դրան հետեւեցին իշխանութեան կողմից հաւաստիացումները, որ այս պահին որեւէ գործ

ծրնթաց չկայ, ու չի նախատեսուել Արցախի ապագայի մասով, իսկ Արցախի իշխանութիւններն էլ իրենց հերթին յայտնեցին, որ հաշտ են Հայաստանի վարած արտաքին քաղաքականութեան հետ եւ որ Արցախի մասով ընթացող զարգացումներից տեղեակ են ու դժգոհութիւն չունեն:

Սակայն լիովին տարօրինակ էր ընդդիմութեան արձագանքը Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի հարցազրույցին, որում վերջինս բազմաթիւ դրական խօսքեր էր հնչեցրել Հայաստանի ժողովրդավարական իմիջի, ձեռքբերումների ու իրականացուող բարեփոխումներին աջակցելու մասին՝ անդրադառնալով նաեւ Արցախի հարցին:

Դեսպանը յայտնել էր, որ ԱՄՆ-ը ճանաչում է Լեւոնայի Ղարաբաղի բնակչութեան դերակատարումը իր ապագան որոշելու հարցում՝ ըստ էութեան փարատելով նաեւ ՀՀ ընդդիմադիրներին՝

Արցախի հարցով ունեցած «մտահոգութիւնները»: Բայց իրականում դեսպանի հայամէտ յայտարարութիւնը մեր ընդդիմադիրների շրջանում ունեցաւ հակառակ ազդեցութիւնը. այն ողջունելու, դրա հիման վրայ խորհրդարանական աշխատանքով մեր բանակցային դիրքերն ամրապնդելու փոխարէն մեր ընդդիմութիւնը վերցրեց յայտարարութիւնից միայն իշխանութեանը նուաճումները արձանագրող հատուածը ու սկսեց թիրախաւորել դեսպան Թրեյսիին. ընդհուպ բանը հասաւ անգամ նրան, որ Ամերիկայի Հայ Դատի եանձնախումբը (ANCA) ԱՄՆ նախագահ Ջոյ Բայդենին կոչ արեց հետ կանչել Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպան Թրեյսիին:

Սրա փոխարէն, օրինակ, ընդդիմութիւնը կարող էր գնալ քաղաքական պարզ տեխնոլոգիայի կիրառման (որից վերջիններս յա-

Շար.ը էջ 8



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ  
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ԼՈՒՐԵՐ

Ձերբակալութիւններ Ընդդիմութեան Հաւաքի Ընթացքին Խուլիկանութիւն Կատարելու Մեղադրանքով



Ընդդիմադիր ցուցարարներ խուլիկանութիւն կը գործեն Երեւանի մէջ

Կը ձեռնարկուին միջոցառումներ՝ Երեւան քաղաքի Մոլտովական եւ Թոթովենց փողոցներու խաչմերուկին վրայ անհնազանդութեան գործողութեան մասնակիցներուն կողմէ խուլիկանութիւն կատարելու բոլոր հանգամանքները պարզելու ուղղութեամբ:

Ինչպէս կը յայտնեն Քննչական կոմիտէին, նախաքննութեամբ պարզուած է միջադէպին մասնակից անձերու երկուքին ինքնութիւնը, որոնք Երեւան քաղաքի բնակիչներ են: Քննութեամբ պարզուած է, որ 2022-ի Մայիս 17-ին ժամը 10:00-ի սահմաններուն, Երեւան քաղաքի Մոլտովական եւ Թոթովենց փողոցներու խաչմերուկին վրայ տեղի ունեցած հաւաքի ընթացքին վերջիններս, խումբ մը անձերու հետ, անտեսելով նշուած վայրին մէջ ծառայութիւն իրականացնող ոստիկաններու՝ պատշաճ վարքագիծ դրսեւորելու եւ հասարակական կարգը չխախտելու օրինական պահանջները, սեփական անձի առաւելութիւնները ընդգծելու մոլուցքով տարուած, ուղղակի դիտաւորութեամբ կոպիտ կերպով խախտած են հասարակական կարգը:

հարցուցած եւ վիրավորած են պատահական անցորդները, խուլիկանութեամբ եւ արգիլած են փողոցի երթեկեկելի գոտիով երթեկեկող ինքնաշարժներուն երթեկեկութիւնը՝ ձեռքերով եւ ոտքերով հարուածելով «Մագոս» մակնիշի ինքնաշարժը, իսկ վերոյիշեալ անձերէն մէկը բռնութիւն գործադրած է դէպքին միջամտած երիտասարդի նկատմամբ՝ իր ձեռքին գտնուող հեղուկով լի շիշով հարուածելով վերջինիս դէմքին եւ պատճառելով մարմնական վնասուածքներ:

Ձեռք բերուած բաւարար արագուցներու համակցութեամբ՝ մէկ անձի մեղադրանք առաջադրուած է՝ ՀՀ Քրէական Օրէնգիրքի 258-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով, որպէս խափանման միջոց անոր նկատմամբ կիրառուած է ստորագրութիւն չհետանալու մասին: Բռնութիւն գործադրած երկրորդ անձը ՀՀ Քրէական Օրէնգիրքի 258-րդ յօդուածի 4-րդ մասով նախատեսուած յանցագործութիւն կատարելու կասկածանքով ձերբակալուած է:

Նախաքննութիւնը կը շարունակուի:

Բարձրաստիճան Սպաներու Քրէական Գործը Ուղարկուած Է Դատարան

Ձինուած Ուժերու պաշտօնատար անձերու կողմէ պաշտօնէական կեղծիք կատարելու, պաշտօնէական անփութութիւն դրսեւորելու եւ պաշտօնէական դիրքը չարաչափելու փաստի առթիւ Քննչական կոմիտէի վարչութեան մէջ քննուած քրէական գործով ձեռք բերուած են ռազմական դրութեան ժամանակ բարձրաստիճան պաշտօնատար անձերու առերեւոյթ յանցաւոր արարքներու վերաբերեալ բաւարար ապացույցներ, կը յայտնէ Գլխաւոր Դատախազութիւնը:

Ձինուած Ուժերու Գերագոյն Շտաբի պետի տեղակալ Անդրանիկ Մակարեանին մեղադրանք առաջադրուած է Քրէական Օրէնգիրքի 375-րդ յօդուածի 4-րդ մասով՝ երշխանութիւնը չարաչափելու, իշխանագանցութիւնը կամ իշխանութեան անգործութիւնը ռազմական դրութեան, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներուն մէջ, երեք սպաներուն՝ գործմասի հրամանատար, գործմասի շտաբի պետ, գործմասի համալրման բաժանմունքի պետ, յանցակցութեան եւ այլ յօդուածներով: Քրէ-

ական գործը ուղարկուած է Սիւնիք մարզի դատարան:

Դատախազութեան փոխանցմամբ, նախաքննութեամբ պարզուած է, որ Ձինուած Ուժերու ԳՇ պետի տեղակալ Ա.Մ.-ն (Անդրանիկ Մակարեանը), որ 44-օրեայ պատերազմի օրերուն պաշտպանութեան հարաւային ուղղութեան գորախումբի հրամանատարն էր, 2020-ի Հոկտեմբեր 21-ին՝ ժամը 8-ի սահմաններուն, տեղեկութիւն ստանալով գործմասի հրամանատար Ա.Ա.-ի խումբի՝ Կովսական քաղաքի սկզբնամասին մէջ շրջափակման մէջ յայտնուելու մասին:

Ըստ Դատախազութեան, հրատարակելով Ա.Ա.-ի ղեկավարած խումբի անդամներուն օգնութեան շտապելու անխնայ անձնակազմին տուած է «նահանջ» հրաման, հետեւանքով շրջափակման մէջ յայտնուած Ա.Ա.-ի ղեկավարած 62 հոգինոց խումբի 40 զինուորներէն 5-ը գերեվարուած են, 12-ը՝ սպանուած, իսկ մնացեալ 23 զինուորներու, փոխադրականութիւն մէկ վարորդի գտնուելու վայրը անյայտ է:

2018-ի Համեմատ՝ Ներկայիս ՀՀ-ի Մէջ Ունիւմ 123 Հազար 310-ով Աւելի Աշխատատեղի. ՀՀ Վարչապետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայ գտնուած է Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտի (ԱՆԻՖ) եռամեայ՝ 2019-2021 թուականներու գործունէութեան գեկուցի ներկայցման նուիրուած միջոցառման, որու ընթացքին ամփոփուած են ԱՆԻՖ-ի հաշուետու ժամանակահատուածին իրականացուցած բոլոր ծրագրերը:

Իր խօսքին մէջ վարչապետ Փաշինեանը յիշեցուցած է, որ ԱՆԻՖ-ը ստեղծուած է երեք տարի առաջ եւ այս ընթացքին կառավարութիւնը մեծ յոյսեր կապած է եւ կը շարունակէ կապել անոր հետ:

«Բայց պէտք է ընդգծենք, որ շատ են նաեւ յոռետեսները, քննադատները, եւ շատ կարեւոր են այսպիսի միջոցառումները, որպէսզի լինի հաշուետուողականութիւն, թէ ինչ է կատարուել այս ընթացքում:

«Ուզում եմ ասել նաեւ, թէ ինչն էր պատճառը, որ մենք, այնուամենայնիւ, հիմնադրամը ստեղծելու որոշում կայացրեցինք: Որովհետեւ ե՛ւ պետական կառավարման համակարգում, ե՛ւ տնտեսութեան մէջ տեսնում ենք, որ ամենակարեւորն է ունենալ վճարականութիւն՝ թուլութիւնները չարթահարելու համար», նշած է վարչապետը:

Օգտուելով առիթէն՝ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է ժամանակին կայացուցած քանի մը որոշումներու ազդեցութեան տնտեսութեան վրայ:

Ընդդիմադիրները Օգտուելով Մանտաքէն, Ասպատակած Էին ԱԳՆ-ն. Պատգամաւոր

Ազգային ժողովի յայտարարութիւններու ժամին «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Արուսեակ Զուլհակեանը անդրադարձաւ ընդդիմադիրներու գործողութիւններուն:

«Այսօր թալանի փրկութեան, ժողովրդավարութեանը եւ փտածութեան դէմ պայքարի դիմադրութեան շարժման մի շարք քթիւրիս-թներ, որոնք համատեղութեան կարգով նաեւ պատգամաւորի մանտաք կրողներ են, յամենայնդէպս դեռ, օգտուելով պատգամաւորական մանտաքի ընձեռած պետական մարմիններ անարգել մուտք գործելու հնարաւորութիւնից, ասպատակել էին Արտաքին Գործերու Նախարարութիւնը: Մուտք էին գործել իրենց աշխատանքային պարտականութիւնները բարեխղճօրէն կատարող պետական ծառայողներին սենեակներ, վանկարկում էին իրենց մտահորիզոնի սահմաններին համապատասխան կոչեր, զբաղում իրենց սիրելի, բայց անպտուղ, հանրութեանը եւ պետութեանը որեւէ օգուտ չբերող զբաղմունքով՝ դրօշազետեղմամբ, այդ թւում՝ մարդկանց վրայ: Կարելի է ասել՝ պատանդաւել էին արտաքին գործերի նախարարի տեղակալին, մի քանի տեսախցիկով տեսանկարահանելով վերջինիս՝ ստիպում էին հանդէս գալ կոչերով:

Աւելորդ է նշել նաեւ, որ մարդուն պատանդ վերցնելով, նրան տեսանկարահանելով՝ յայտարարութիւններ անել ստիպելը անարգել-

«Օրինակ, 2018 թուականին Հայաստանի Հանրապետութիւնում համահարթ եկամտային հարկ ներդրուած մասին քաղաքական որոշում կայացրեցինք: Յիշում էք այն ժամանակ էլ շատ էր քննադատութիւնը, շատ էր յոռետեսութիւնը, բայց պիտի ասեմ, որ, օրինակ, Ապրիլ ամսուայ տուեալներով՝ մենք Հայաստանի աշխատաշուկայում ունենք նոր բացարձակ մրցանիշ: Այսինքն՝ Ապրիլի դրութեամբ Հայաստանի Հանրապետութիւնում գրանցուած աշխատատեղիների բացարձակ թիւը մեծ է նախկինում եղած բոլոր ժամանակներից: Սովորաբար, մենք վերջին այդպիսի մրցանիշը համարում ենք 2021 թուականի Դեկտեմբերը, որն աւանդաբար ամենաբարձր աշխատատեղի ունեցող միսն է, բայց արդէն Ապրիլին մենք 5000-ից աւել աշխատատեղիով գերազանցել ենք նախորդ մրցանիշը, իսկ 2018 թուականի համեմատութեամբ՝ այսօր 123 հազար 310-ով աւելի աշխատատեղի ունենք Հայաստանի Հանրապետութիւնում: Ուսքը ոչ միայն գրանցուած, այլ աշխատավարձով վճարուող աշխատատեղիների մասին է, որովհետեւ կան աշխատատեղիներ, որոնցից եկամտային հարկ չի յառաջանում», ընդգծած է կառավարութեան ղեկավարը:

Հայաստանի մէջ ներդրումային միջավայրի զարգացումը խթանելու նպատակով այս տարի պիտի մեկնարկէ ԱՌՖԻ (Armenian Financed) ծրագիրը



«ՔՊ» խմբակցութեան պատգամաւոր Արուսեակ Զուլհակեան

չական խմբակները գործելու են, ինչն էլ տարօրինակ է, երբ գործ ունենք մարդկանց հետ, ում հետեւում կանգնած են 31-ի, Դրոյի գործի կազմակերպիչները եւ մասնակիցները, մարդիկ, ում իշխանութեան օրօք Աժ շէնքում անարգելչական ակտի շրջանակներում սպանուել են երկրի բարձրագոյն պաշտօնեաներ, մարդիկ, որոնք այդ անարգելչներին կոչել են մի խումբ ուսանողներ, մարդիկ, ովքեր հէնց իրենք էլ աչքի են ընկել Աժ շէնքի ասպատակութեամբ», ըսաւ ան:

Ըստ Արուսեակ Զուլհակեանի՝ այսօր իրավիճակ մըն էր, երբ պատգամաւորական մանտաքներ բաժին հասած են մարդոց, որոնք ոչ ցանկութիւն, ոչ ալ ունակութիւն ունին զբաղելու քաղաքականութեամբ:



# ԼՈՒՐԵՐ

## Լիթուանիան Կ'աջակցի Հայաստանի Եւ Ատրպէյճանի Միջեւ Համաձայնութիւն Չեռք Բերելուն. Կիթանաս Նաուսետա



Հայաստանի եւ Լիթուանիոյ նախագահներու հանդիպումը Երեւանի մէջ

Լիթուանիան կ'աջակցի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համաձայնութիւն ձեռք բերելուն: Այս մասին յայտնեց Լիթուանիոյ Հանրապետութեան նախագահ Կիթանաս Նաուսետան Երեւանի մէջ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանի հետ հանդիպումէն յետոյ լրատուամիջոցներուն համար համատեղ յայտարարութեան ժամանակ:

Սա Լիթուանիոյ նախագահին առաջին այցելութիւնն է Հայաստան: Ան նշեց, որ տպաւորուած է հիւրընկալութեամբ: Նաուսետան յիշեցուց, որ 1991 թուականին Լիթուանիան առաջին երկիրն էր, որ ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը:

«Այդ ժամանակէն առ այսօր մենք օժանդակած ենք ձեռք բերուն, ինչպէս նաեւ ժողովրդավարական արժէքներու ձեռք բերումին: Լիթուանիան կ'օժանդակէ Արեւելեան Գործընկերութեան ծրագրերուն: Լիթուանիան կ'օժանդակէ Հայաստանի համարկրման եւրոպական ընտանիքին», ըսաւ Նաուսետան՝ յաւելելով, որ իրենք ՀՀ-ԵՄ յարաբերութիւններուն մէջ լայն շրջանակ կը ներկայացնեն:

Լիթուանիոյ նախագահը ողջունեց Հայաստանի կառավարութեան ջանքերը յատկապէս արդարադատութեան համակարգին մէջ: «Մենք կը փափաքինք, որ դուք շարունակէք ժողովրդավարութեան այս ճանապարհը, որ պիտի յանգեցնէ ձեր ընկերատն-

տեսական զարգացման», ըսաւ ան: Նաուսետան անդրադարձաւ նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւններու հարցին: «Լիթուանիան կ'օժանդակէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համաձայնութիւն ձեռք բերելուն», ըսաւ Լիթուանիոյ նախագահը՝ ընդգծելով, որ Եւրոխորհուրդի նախագահ Շարլ Միշլի ջանքերը նոյնպէս ուղղուած են անոր:

Ան նշեց, որ հնարաւորութիւն ունեցած է ծաղիկներ դնելու Հայոց Ցեղասպանութեան գոհերու յուշահամալիրին: «Սա բան մըն է, որ երբեւիցէ որեւէ ձեռով այս երկրագունդին վրայ պէտք չէ կրկնուի», նշեց Նաուսետան:

Ան անդրադարձաւ նաեւ Ուքրանիոյ իրավիճակին: Ան ընդգծեց, որ ազատութիւնը ամբողջ ժողովրդավարական աշխարհին համար չափազանց կարեւոր է՝ յաւելելով, որ ամէն ձեռով պէտք է օժանդակել ու քրանացիներուն:

Լիթուանիոյ նախագահը վստահութիւն յայտնեց, որ իր այցելութիւնը պիտի օժանդակէ Հայաստանի եւ Լիթուանիոյ, երկու երկիրներու ժողովուրդներուն միջեւ յարաբերութիւններու խորացման: Ան այս առումով մեծ ներուժ կը տեսնէ: Նաուսետան կը հաւատայ, որ երկկողմ յարաբերութիւններու տարբեր՝ առեւտուրի, մշակութի, կրթութեան եւ բազմաթիւ այլ ոլորտներու մէջ կարելի է երկու կողմէն ալ օգուտ ստանալ:

## Հայաստանի Տարածքին Միջանցքային Տրամաբանութեան Գնահատարի Չի Կրնար Գործել. Ան Քարտուղար

Հայաստանի տարածքին միջանցքային տրամաբանութեան ճանապարհ կամ փոխադրութեան ուղի չի կրնար գործել, արձագանգելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութեան, ըսած է Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը՝ շեշտելով, որ Հայաստանի դիրքորոշումները որեւէ փոփոխութիւն չեն կրած:

«Բոլոր պայմանաւորուածութիւնները, որ ձեռք են բերուել Պրիւքսէլում, վերաբերուած են տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացմանը: Պրիւքսէլում ձեռք բերուած բոլոր պայմանաւորուածութիւնները տեղա-

ւորուած են նախկինում Հայաստանի ներկայացուցիչների արած հրապարակային յայտարարութիւնների շրջանակում: Տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացման ծիրին մէջ պայմանաւորուածութիւնները վերաբերուել են սահմանային, մաքսային հսկողութեան, ճանապարհային վճարների գանձման, միջազգային տարանցման կազմակերպման հարցերին: Սրանք կարեւոր հարցեր են «Հայկական Խաչմերուկ» նախագծի իրագործման համար եւ Հայաստանի կառավարութիւնը հետեւողականօրէն շարժուելու է այս ուղղութեամբ», ըսած է Հայաստանի ԱԽ քարտուղարը:

## Միրզոյեան Եւ Լաւրով Քննարկած Եւ Սահմանազատման Յանձնաժողովի Չեւաւորման Առնչուող Հարցեր

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան, Մայիս 23-ին, հեռախօսազրոյց ունեցած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովի հետ:

Հեռախօսազրոյցի ընթացքին անդրադարձ կատարուած է 2020 թուականի Նոյեմբեր 9-ի, 2021 թուականի Յունուար 11-ի եւ Նոյեմբեր 26-ի եռակողմ յայտարարութիւններու գրոյթներու իրականացման ընթացքին:

Հայաստանի եւ Ռուսիոյ արտաքին քաղաքական գերատեսչութիւններուն ղեկավարները քննարկած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման ու սահմանային անվտանգութեան հարցերով յանձնաժողովի ձեւա-

ւորման առնչուող հարցեր: Անդրադարձ կատարուած է նաեւ տարածաշրջանին մէջ տնտեսական կապերու եւ ճանապարհային հաղորդակցութիւններու ապաշրջափակման:

Նախարար Միրզոյեան վերահաստատած է Հայաստանի դիրքորոշումը՝ տարածաշրջանային խաղաղութեան ու կայունութեան հաստատման եւ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ կարգաւորման գործընթացին վերաբերելով:

Քննարկուած են նաեւ հայ-ռուսական համագործակցութեան երկկողմ եւ բազմակողմ օրակարգին վերաբերող հարցեր, միտքեր փոխանակուած են դաշնակցային յարաբերութիւններու աւելի ամրապնդման ուղղուած քայլերուն շուրջ:

## ԱՄՆ-ի Դեսպանը Խօսած Է Իրաւապահներու Կողմէ Ուժի Կիրառման Եւ Ցուցարարներու Կողմէ Այլոց Իրաւունքները Չոտնահարելու Մասին

Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպան Լին Թրէյսին անդրադարձած է ընդդիմութեան անհնազանդութեան գործողութիւններու ընթացքին ոստիկաններու մասնակցութեամբ տեղի ունեցած միջադէպերուն:

«Ժողովրդավարութեան Հայկական Համագումար»-ի ընթացքին դեսպանը մտահոգութիւն յայտնած է, որ իրաւապահները ուժ կը կիրառեն բողոքի շարժումի մասնակցներուն նկատմամբ:

«Տեսնելով, թէ ինչ տեղի կ'ունենայ ցուցարարներուն հետ, ակնյայտ է, որ այստեղ կան մտահոգութիւններ: Այն, ինչ մենք կը տեսնենք տեսաձայնակներուն, տեսանիւթերուն մէջ, անհամաչափ ուժի կիրառում է: Այս դէպքերը պէտք է հետաքննուին, այս ոլորտին մէջ պէտք է պատասխանատուութիւն ըլլայ: Եւ մենք ազդակներ տեսած ենք, որ կառավարութիւնը կը փափաքի հետաքննել այս դէպքերը», ըսած է Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպանը:

Լին Թրէյսին նաեւ խօսած է ցոյցերու ընթացքին լրագրողներուն աշխատանքը յարգելու, անոնց նկատմամբ ոտնձգութիւնները բացառելու անհրաժեշտութեան մասին, անդրադարձած է ցուցարարներուն եւս. «Ցուցարարները եւս



Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպան Լին Թրէյսի

ունին պատասխանատուութիւն խաղաղ իրականացնելու գործողութիւնները՝ քոսս, խառնաշփոթ չստեղծելու, միւսներուն իրաւունքները չոտնահարելու հարցին մէջ»:

Արդէն կէս ամիսէ աւելի փողոցային պայքար սկսած ընդդիմութիւնը արեւմտեան երկիրները, այդ շարքին՝ Միացեալ Նահանգները, կը մեղադրէ Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները չդատապարտելու եւ երկակի չափանիշներ կիրառելու համար:

## Փաշինեան-Միշլ-Ալիեւ Հանդիպում

Շարունակուած էջ 1-էն

դի ղեկավար Շարլ Միշլը՝ Նիկոլ Փաշինեանի ու Իլհամ Ալիեւի հետ բանակցութիւններէն յետոյ:

«Քննարկուած բաց էր եւ արդիւնաւէտ, մենք դիտարկեցինք հարցերու ամբողջ շրջանակ մը: Մանրամասն քննարկեցինք մարդասիրական խնդիրները, այդ շարքին՝ ականագերծման, ձեռքարկութիւնները: Հետեւեալ արդիւնքներուն հասած ենք. սահմաններու հարցով համատեղ յանձնաժողովներու առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ միջպետական սահմանին յառաջիկայ օրերուն, այն պիտի քննարկէ սահմանագծ-

ման եւ սահմանային անվտանգութիւնը լաւագոյնս ապահովելու հետ կապուած բոլոր հարցերը», ըսաւ Միշլը:

ԵԱՀԿ, իր կարգին, ողջունած է Պրիւքսէլի մէջ կայացած Փաշինեան-Ալիեւ-Միշլ հանդիպումը:

«Ուղիղ երկխօսութիւնը յարաբերութիւններու կարգաւորման եւ համապարփակ խաղաղութեան համաձայնագրի պատրաստման նախապայման է», Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրտողընը քննարկելով լեհաստանի նախագահութիւնը, յաւելելով. «Մենք կը շարունակենք մնալ պատրաստակամ՝ աջակցելու ջանքերուն երաշխաւորելու Հայաստանի Կովկասի խաղաղ, ժողովրդավարական եւ բարգաւաճ ապագան»:



# Փաշինեան Վերստին Կը Յայտարարէ՝ Ժողովրդավարութիւնը Հայաստանի Միջազգային Հիմնական Վաճառանիշն է

Մինչ ընդդիմութիւնը կը քննադատէ իշխանութիւններինը հակաժողովրդավարական քայլերու համար, վարչապետ Նիկոլ Փաշինեան վերստին կը յայտարարէ, որ ժողովրդավարութիւնը Հայաստանի միջազգային հիմնական պրենտն ու երկրի ինքնիշխանութեան պահպանման առանցքային գործօնն է:

«Ժողովրդավարութիւնը այսօր Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ անկախութեան երաշխաւորման եւ պահպանման կարեւորագոյն ու առանցքային գործօնն է: Մեր խնդիրն է ապացուցել, որ ժողովրդավարութիւնն, այո՛, նաեւ ի վիճակի է ապահովել երկրի արտաքին անվտանգութիւնը, այդ թւում՝ երկրի ներքին անվտանգութիւնը», նշեց Փաշինեան:

Ժողովրդավարութեան Հայկական Համագումարի ընթացքին Փաշինեան կրկին խօսեցաւ խաղաղութեան անհրաժեշտութեան մասին: Յիշեցուց, որ այդ օրակարգը այս կառավարութիւնը որդեգրած է, քաղաքայիններն ալ զայն իրականացնելու համար մասնաթիւ տուած են:

«Հիմա շատ կարեւոր է ժողովրդավարութիւնն ամրապնդելու համար, որ մենք համախմբուենք մէկ այլ առաքելութեան շուրջ՝ ինչպէս Հայաստանի Հանրապետութեանը բերել ենք ժողովրդավարութիւն, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութեանը բերենք խաղաղութիւն, որովհետեւ կարծում եմ՝ մէկն առանց միւսի շատ դժուարութեամբ կարող է գոյութիւն ունենալ», ընդգծեց վարչապետը:

Նիկոլ Փաշինեանը թէեւ նկատեց, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը անամպ չէ, բայց շեշտեց հիմնականին մէջ դատական համակարգին մէջ առկայ խնդիրները:

Մինչ Երեւանի մէջ կ'ընթանար միջազգային «Freedom House»-ի եւ «Իրազեկ Քաղաքացիներու Միաւորման» կազմակերպած «Ժողովրդավարութեան Հայկական Համագումարը», դուրսը ցուցարարները վերստին քննադատեցին արեւմտեան երկիրները, այդ շարքին՝ ԱՄՆ-ին, ոստիկաններու գործողութիւններուն զնահատական չտալու համար: Նոյն այդ ընթացքին Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպանը համագումարին իր ելոյթին մէջ մտահոգութիւն կը յայտնէր ոստիկաններու գործողութիւններուն վերաբերեալ:

«Տեսնելով, թէ ինչ տեղի կ'ունենայ ցուցարարներուն հետ, ակնյայտ է, որ այստեղ կան մտահոգութիւններ: Այն, ինչ մենք կը տեսնենք տեսահոլովակներով, տեսանիւթերուն մէջ, անհամաչափ ուժի կիրառում է: Այս դէպքերը պէտք է հետաքննուին, այս ոլորտին մէջ պէտք է պատասխանատուութիւն ըլլայ: Եւ մենք ազդակներ տեսած ենք, որ կառավարութիւնը կը փափաքի հետաքննել այս դէպքերը», յայտնեց ԱՄՆ-ի դեսպանը:

Դեսպան Լին Թրէյսին նաեւ խօսեցաւ ցոյցերու ընթացքին լրագրողներուն աշխատանքը յարգելու, անոնց նկատմամբ ոտնձգ-

գութիւնները բացառելու անհրաժեշտութեան մասին, անդրադարձաւ նաեւ ցուցարարներուն. «Ցուցարարները եւս ունին պատասխանատուութիւն խաղաղ իրականացնելու գործողութիւնները՝ քառս, խառնաշփոթ չստեղծելու, միւսներուն իրաւունքները չոտնահարելու հարցով»:

Ընդդիմադիրներուն զայրացուցած էր յատկապէս Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպանին հարցազրոյցը, ուր Լին Թրէյսին խօսած էր 2018-ին Հայաստանի որդեգրած ժողովրդավարական արժէքներուն մասին: Դեսպանին այսօրուայ ելոյթը բաւարարած է ընդդիմադիրները, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Ղազինեանը կ'ողջունէ Լին Թրէյսիի քայլը:

«Ցանկանում եմ ողջունել, մեր բարեկամ ԱՄՆ դեսպանի առարկայական եւ իրավիճակից բխող համարժէք զնահատականը ոստիկանութեան վայրագութիւնների, ապօրինութիւններին», նշեց Ղազինեանը:

Ընդդիմադիր պատգամաւորը, սակայն, վիճարկեց կը համարէ 2021 թուականի ընտրութիւններուն 2108-ին որդեգրած արժէքները վերահաստատելու մասին դեսպանին խօսքը. «Որ իրենք աջակցում են եւ իրենք կանգնած են 18 թուականին ընդունուած եւ 21 թուականին վերահաստատուած ժողովրդավարական արժէքներին եւ ժողովրդավարական ուղուն»:

«Արդեօք եղած է ոստիկաններուն կողմէ անհամաչափ ուժի կիրառում, այդ պէտք է հետաքննել: Այդ բնական գործընթաց է, որ տեղի կ'ունենայ բոլոր ժողովրդավարական երկիրներուն մէջ: Պէտք է դատարանը որոշէ: Ես յոյս ունիմ, որ Հայաստանի մէջ ալ նոյնը տեղի կ'ունենայ: Կը կարծեմ, որ իրաւապահ մարմինները եւ ոստիկանութիւնը պէտք է հետեւին օրէնքի տառին», ըսաւ Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար Անտրէա Վիթթորինը:

Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավարը կ'ըսէ, որ նոյն սկզբունքին նաեւ ցուցարարները պէտք է հետեւին: Այս ըսելով՝ Անտրէա Վիթթորինը կը շեշտէ, որ Հայաստանի մէջ աւելցած է ատելութեան խօսքը:

«Կ'ուզեմ հասկնալ՝ արդեօք սա՞ է Հայաստանի ապագան: Բոլորը գիտեն, որ ես պատրաստակամ եմ եւ կը լսեմ բոլոր կողմերուն բողոքները եւ կ'արձագանգեմ անոնց: Բայց որոշ պարագաներու մենք չենք որոշում կայացնող կողմը: Որոշ հարցերուն պէտք է արձագանգէ հայկական կողմը, պէտք է հետաքննութիւններ կատարուին: Բնականաբար, բոլորը ցոյցեր կատարելու իրաւունք ունեն, ինչպէս այլ երկիրներու մէջ: Բայց, ի հարկէ, կան ազատութեան սահմանափակումներ այլ երկիրներու մէջ նոյնպէս», ընդգծեց ան:

Եւրոմիութեան դեսպանը կը փափաքի, որ կողմերը խնդիրները երկխօսութեան միջոցով լուծեն՝ առանց իրար մեղադրելու եւ վիրաւորելու:

# Հայաստանի Նախագահը Մասնակցած Է Տաւոսի Համաշխարհային Տնտեսական Համաժողովի Բացման



Նախագահ Վահագն Խաչատուրեան Տաւոսի Համաժողով Ամերիկացի ծերակուտական Պոպ Սեննոտեզի հետ

Աշխատանքային այցով Զուլիցերիա գտնուող Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը մասնակցած է Համաշխարհային Տնտեսական Համաժողովի բացման, որ այս տարի նուիրուած է «Պատմութիւնը շրջադարձային կէտին. Կառավարութիւններու քաղաքականութիւնը եւ առեւտրային ռազմավարութիւնները» թեմային:

Համաժողովի ընթացքին կը քննարկուին անվտանգութեան եւ հրատապ մարդասիրական խնդիրները, համաճարակէն յետոյ տնտեսութեան վերականգնումը, կլիմայի փոփոխութեան դէմ պայքարը եւ չորրորդ արդիւնաբերական յեղա-

փոխութեան արհեստագիտութիւններու կիրառումը: Քովիտի համաճարակին պատճառով յառաջացած երկամեայ ընդմիջումէն յետոյ համաժողովը առաջին անգամ կը կայացուի ոչ-առցայն ձեւաչափով:

Համաշխարհային Տնտեսական Համաժողովի քննարկումներուն կը մասնակցին կառավարութիւններու, միջազգային կազմակերպութիւններու, գործարար համայնքի աւելի քան 2000 ներկայացուցիչներ, այդ շարքին՝ 50 պետութիւններու եւ կառավարութիւններու ղեկավարներ:

Տաւոսի համաժողովի ծիրին մէջ կը նախատեսուին նախագահին շարք մը երկկողմ եւ բազմակողմ հանդիպումներ:

# Տարբեր Ձեւաչափերով Ընթացող Բանակցութիւններուն Մէջ Արցախի Իշխանութիւններուն Վերաբերմունքը Միանշանակ Է. Նախագահի Խօսնակ

Արցախի Հանրապետութեան իշխանութիւններուն վերաբերմունքը տարբեր ձեւաչափերով ընթացող բանակցութիւններուն եւ քննարկումներուն մէջ Արցախի Հանրապետութեան ու Արցախի ժողովուրդի ճակատագրին վերաբերեալ հնչեցուող յայտարարութիւններուն միանշանակ է եւ արտայայտուած է քանի մը անգամ՝ նախագահին ու Ազգային ժողովին կողմէ:

Այս մասին ըսած է Արցախի Հանրապետութեան նախագահի մամուլի քարտուղար Լուսինէ Աւանեսեանը՝ աւելցնելով, որ կը փափաքի լիջեցնել 2021 թուականի Դեկտեմբերին նախագահ Յարութիւնեանի հրապարակած դրոյթներէն քանի մը հատը:

Արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի լիարժէք ճանաչումը որեւէ վերապահման եւ զիջման ենթակայ չէ: Այդ հարցին բացառիկ տէրը Արցախի ժողովուրդն է:

Արցախի Հանրապետութեան անկախութեան միջազգային ճանաչումը իշխանութիւններուն ուղեկցող կը մնայ: Ատրպէյճանի կազմին մէջ որեւէ կարգավիճակ անընդունելի է:

Ոչ միայն կարգավիճակի, այլեւ ժողովրդագրական առումով վերադարձը անցեալին անընդուն-



Արցախի Հանրապետութեան նախագահի մամուլի քարտուղար Լուսինէ Աւանեսեան

նելի է: Արցախի Հանրապետութիւնը ունի իր տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու խնդիր:

Արցախի նախագահի խօսնակին խօսքով՝ իր քաղաքականութիւնը Արցախի իշխանութիւնը կը կառուցէ ու կ'իրականացնէ Արցախի Հանրապետութեան անկախութեան հռչակագրին եւ Մայր օրէնքին համապատասխան՝ համագործակցելով բոլոր գործընկերներուն հետ:



### Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Յայտարարութիւնը

Գերագոյն հոգեւոր խորհուրդը, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի, անդրադառնալով 44-օրեայ աղէտալի պատերազմից յետոյ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառայած արտաքին ու ներքին մարտահրէճներին, աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային զարգացումներին, արձանագրում է՝

- Ատրպէյճանական իշխանութիւնները շարունակում են իրենց դատապարտելի թշնամական վերաբերմունքը Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի հանդէպ: Եռակողմ յայտարարութեան ստորագրումից յետոյ Ատրպէյճանը պարբերաբար սադրանքներ է հրահրում Հայաստանի եւ Արցախի սահմաններին, թիրախաւորում նաեւ խաղաղ բնակչութեանը, շարունակում է պահել ռազմագերիներին, իր վերահսկողութեան տակ յայտնուած տարածքներում ոչնչացնում եւ իւրացնում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնը,

- Աշխարհաքաղաքական իրադարձութիւնների համատեքստում ՀՀ իշխանութիւններին եւ համազգային կառույցներին հարկ է զգոնութիւն դրսեւորել, որպէսզի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը սակարկման առարկայ չդառնայ,

- Խաղաղութիւնը չի կարող հաստատուել ազգային արժանապատուութեան նուաստացման հաշուին, հայրենի պետութեան տարածքային ամբողջականութեան հանդէպ չդադարող ոտնձգութիւնների, ռազմագերիների առկայութեան, Ատրպէյճանի շարունակական սպառնալիքների եւ հայատեացութեան քարոզչութեան պայմաններում: Խաղաղութիւնը պէտք է հիմնուի արդարութեան, արժանապատուութեան եւ իրաւունքների յարգման սկզբունքների վրայ,

- Անկախ առկայ ճնշումներից եւ արտաքին սպառնալիքներից, առաւել եւս ներհասարակական բեւեռացուածութեան պայմաններում՝ ՀՀ եւ ԱՀ իշխանութիւնները հարկ է, որ չձեռնարկեն հայոց անկախ պետականութիւնը եւ Արցախի ապագան վտանգող քայլեր, չդրսեւորուի գիշողականութիւն ազգի հիմնարար իրաւունքների եւ պատմական արդարութեան հետապնդման յանձնառութեան մէջ:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը, խիստ մտահոգուած ստեղծուած բարդագոյն իրավիճակով, հայրենիքում տեղ գտնող ներքաղաքական զարգացումներով եւ ապաւինելով Բարձրեալ Տիրոջ ողորմութեանը եւ մեր ժողովրդի իմաստութեանը, յորդորում է՝

- Առաջնային նկատել ազգային եւ պետական շահը, գործել խղճի մտօք եւ պատասխանատուութեամբ, խնդիրների արժանապատիւ լուծումները փնտրել բացառապէս մեր համընդհանուր կամարտայայտման ու համախոհութեան մէջ,

- Հայրենիքում, թէ սփիւռքում ամենայն ջանք ի գործ դնել զօրացնելու մեր ազգային միաբանութիւնը՝ վերացնելով պառակտող հատուածականութիւնը, լծուելու հայրենիքի հզօրացմանը, միջազգային հարթակներում եւ ամէնուրեք հետեւողականօրէն բարձրաձայնելու մեր ժողովրդի իրաւունքների ոտնահարման մասին, հետամուտ լինելու Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչմանը եւ հատուցմանը, պաշարելու յանուն մեր ինքնութեան ու հոգեւոր-ազգային արժէքների պահպանութեան,

- Ներքաղաքական գործընթացներում, խաղաղ հաւաքներին, անկախ քաղաքական հայեացքներից կամ պաշտօնական գործառույթներից, դրսեւորել հանդուրժողականութիւն, օրինապահութիւն, յարգանք միմեանց իրաւունքների նկատմամբ՝ բացառելով որեւէ տեսակի բռնութիւն, անհամաչափ ուժի կիրառում, սադրանք եւ օրինախախտութիւն: Ատելութեան խօսքը, վիրաւորանքը եւ թշնամանքի հրահրումը երբեք բարիք չեն կարող լինել:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը կոչ է անում հաւատաւոր մեր աշխարհասփիւռ ժողովրդին շարունակել աջակից ու աստար լինել Արցախի մեր քույրերին եւ եղբայրներին եւ պատրաստակամ յանձնառութիւններով նպաստ ու ներդրում բերել Արցախի Հանրապետութեան զօրացմանը, խաղաղ ու ապահով կեանքին:

Աղօթում ենք մեր երկրի խաղաղութեան ու առաջընթացի համար եւ հայցում Բարձրեալ Աստուծոյ օրհնութիւնն ու զօրակցութիւնը մեր ժողովրդին:

Թող հայրենիքի համար աղօթքը մշտահունչ լինի մեր ազգի գաւակների շուրթերին:

### ՍԴՀԿ Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն

անաչառօրէն կը ներկայացնէ Հայաստանի մէջ տիրող իրավիճակը: Գ.- Սփիւռքը, հակառակ իր ներքին բաժանումներուն ու տարակարծութիւններուն, անվերապահօրէն կանգնած է Հայաստանի պետականութեան եւ Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան կողքին:

Յարգելով Հայաստանի քաղաքացիին ընտրութիւնը, որ ան կատարեց տարի մը առաջ կայացած ազատ, արդար ու ժողովրդավար ընտրութիւններու միջոցաւ, մենք կը շարունակենք սատարել իշխանութիւններուն ներքին ու արտաքին քաղաքականութիւններուն, եւ համոզուած ենք, որ անոնք կը բխին Հայաստանի ու Հայութեան ընդհանրական շահերէն:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին Մայիս 23, 2022 Լոս Անջելես

### Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Քաղաքական Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Նոյնանման քաղաքական յայտարարութեամբ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը հանդէս եկաւ անցեալ տարուայ Փետրուարին, երբ ընդդիմութիւնը դարձեալ փողոց դուրս եկած էր՝ պահանջելով վարչապետի հրաժարականը: Այդ ժամանակ Մայր Աթոռը եւս միացած էր Վարչապետի հրաժարականի պահանջին, որուն համար արժանացած էր քննադատութեան պետական ու ժողովրդային շրջանակներուն կողմէ, որոնք համաձայն չէին Եկեղեցւոյ նման բացայայտ ու կողմնակալ միջամտութեան՝ երկրի քաղաքական կեանքէն ներս:

Այժմ, նման յայտարարութեամբ Մայր Աթոռը կու գայ հասկնելու թէ, կը մնայ նոյն տեսակետին վրայ, հակառակ որ, այդ օրակարգէն ետք տեղի ունեցան ընտրութիւններ ու Հայաստանի ժողովուրդը ըսաւ իր խօսքը:

Երկրորդ հարցադրումը, որ այս առթիւ կը կատարուի շատերուն կողմէ, կը վերաբերի վերջին տասնամեակներուն իրադաժութիւններու նկատմամբ Եկեղեցւոյ որդեգրած լուծումներուն ու անտարբեր մօտեցումին: Մարտ 1-ի սպանդի օրերուն ու անոր մախորդած ու յաջորդած ժողովրդային բոլոր ընդվզումներու եւ բողոքի ցոյցե-

րուն առթիւ կը պատճառաբանուէր թէ, «Եկեղեցին քաղաքականութեամբ չգրադիր»: Սակայն յանկարծ, թաւեայ յեղափոխութենէն ետք, կարգ մը Եկեղեցականներ դարձած են քաղաքական գործիչներ եւ ամէն առիթով պատրաստ են քննադատելու իշխանութիւններու որոշումներն ու վարած քաղաքականութիւնը՝ այլեւայլ հարցերու շուրջ, եւ յաճախ ալ մասնակցելով ընդդիմութեան հանրահաւաքներուն:

Այսպիսով Եկեղեցւոյ եւ ժողովուրդին միջեւ յառաջացող անջրպետը կը խորանայ, շատեր կը հեռանան Եկեղեցիէն եւ ուրիշներ ընկերային հարթակներ կը դիմեն արտայայտելու համար իրենց ընդվզումը, այդ առթիւ օգտագործելով նաեւ վիրաւորական արտայայտութիւններ՝ Եկեղեցականներու հասցէին: Այս երեւոյթները կանխելու համար Եկեղեցին պէտք է վերատեսուէր եւնթարկէ իր մօտեւորները՝ հեռու մնալով քաղաքական հարցերէն, հանդէս գայ բացառապէս ազգային մտահոգութիւններէ մղուած ու նկատի առնէ նաեւ տեսակետը այն ժողովուրդին, որուն հոգեւոր ծառայութեան կոչուած են Հայ Առաքելական Եկեղեցին ու անոր սպասաւորները:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

### Փաշինեան Եւ Պլինքըն

Շարունակուած էջ 1-էն

տան-Ատրպէյճան սահմաններու սահմանազատման, տարածաշրջանային հաղորդակցութիւններու բացման եւ տարածաշրջանային կայունութեան հաստատման:

Անդրադարձ կատարուած է նաեւ յատուկ ներկայացուցիչներու մակարդակով Հայաստան-Թուրքիա քննարկումներու ընթացքին: Զրուցակիցները պայմանաւորուած են շարունակել Հայաստան-ԱՄՆ բարձր մակարդակի շփումները:

**2022**

**AEBU SCHOLARSHIP PROGRAM**

**APPLICATIONS NOW OPEN**

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

To apply, visit our website **WWW.AEBU.ORG**

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104



### Յակոբ Կակոսեան Պարզեւատրուեացաւ Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանով



Կիրակի, 22 Մայիս 2022, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ վաստակաշատ նուիրեալ Յակոբ Կակոսեանը թեմի բարեջան առաջնորդ Գեր. Տ. Յովնան Արք. Տէրէտրեանի միջնորդութեամբ, արժանացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի Սուրբ Ներսէս Շնորհալի պատուոյ բարձր շքանշանին եւ հայրապետական կոնդակին:

Այս առիթով մատուցուած հանդիսաւոր պատարագի ընթացքին, պատարագիչ Յովնան Սրբազան, բարձր գնահատեց մեծարանքի արժանացած նուիրեալ Յակոբ Կակոսեանը, իր աւելի քան եօթ տասնամեակներ եկեղեցանուէր ու մշակութանուէր գործունէութեան համար գոր կատարեց անխոնջ եւ կամաւոր ծառայութեամբ:

«Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ մերծարեալը մաղթելով քաջաւորութիւն, յարատեւութիւն եւ բարօր տարիներ:

### Հ.Բ.Ը.Ս.-ի Հիմնադրութեան 116-րդ Տարեդարձը Փասատինայի Սեջ



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Ս.) հիմնադրութեան 116-րդ տարեդարձը պատշաճ կերպով նշուեցաւ անցեալ կիրակի, Մայիս 22-ին, կ.ե. ժամը 3-ին, Փասատինայի Հ.Բ.Ը.Ս.ի վաչէ եւ թամար Մանուկեան Կատարողական արուեստի հանդիսարահին մէջ:

Թալին Թուրմեանի եւ Թէնի Խաչատրեանի հանդիսավարութեամբ սոյն միջոցառումն սկսաւ ՀԲԸՍ-Հ.Ե.Ը.ի սկաւառներու դրօշակի արարողութեամբ եւ ԱՄՆ-ի ու Հայաստանի զոյգ քայլերգերու ունկնդրութեամբ:

Հայ իրականութենէն ներս աշխարհատարած ազգային բարեսիրական մեծագոյն կազմակերպութեան ՀԲԸՍ-ի ծնունդ տուող պատճառներուն եւ ապա 116 տարիներու հայրենանուէր բազմաբնոյթ ծառայութիւններուն մասին հանգամանօրէն արտայայտուեցան Արեւմտեան Ամերիկայի ՀԲԸՍ-ի ղեկավարներէն Գոհար Սթամպուլեան, Աստղիկ Տատուրեան եւ Թալին Եագուպեան: Իսկ ՀԲԸՍ-ի կեդրոնական վարչութեան պատգամը կարդաց կեդրոնի անդամ Երուանդ Տէմիրճեանը:

ՀԲԸՍ-ի հայրենանուէր եւ օգտաշատ գործունէութիւնը գնահատող Գալիֆորնիոյ Սենաթի անդամ Անթոնիո Փորթանթինօ հռչակագիր մը փոխանցեց շքանշանի ղեկավարութեան:

Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրէտրեան, ոգեկոչական ելոյթով մը արժեւորեց ՀԲԸՍ-ի դերը մեր ազգային կեանքէն ներս:

Գործադրուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցութեամբ Լոս Անճելոսի ՀԲԸՍ-ի երգչախումբին եւ կատարողական արուեստի նպաստընկալ արուեստագէտներու խումբին:

Աւարտին տեղի ունեցաւ ՀԲԸՍ-ի նորարարներու Սթիւտիոյ բացում ու պատմական յիշատակներու ցուցահանդէս եւ հիւրասիրութիւն Պոյճճեան սրահին մէջ:

### ՌԱԿի 100-Ամեակի Տօնակատարութիւնը



Խուռներամ բազմութեան մը ներկայութեամբ կիրակի, 22 Մայիսին, Ալթատինայի (Գալիֆորնիա) Պէշկէթիլեան սրահին մէջ տեղի ունեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (ՌԱԿ) 100-ամեակի տօնակատարութիւնը: Հիւրերու մէջ կը տեսնուէին Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրէտրեան, Արցախի նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Վեր. Սերոբ Մկրտիչեան, Հայաստանի նախկին հիւպատոս դեսպան Արմէն Բայբուրդեան, ՄԴՀԿ-ի, ՀՅԴ-ի կեդրոնի եւ այլ շրջաններու ղեկավարներ եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Հայաստանի, ԱՄՆ-ի եւ ՌԱԿ-ի քայլերգերու ունկնդրութենէն եւ հանդիսավարներու (Մարալ Ոսկանեան եւ Սիլվա Քաջիկեան) բարի գալուստի եւ ողջունի խօսքերէն ետք՝ ելոյթ ունեցաւ Տոբթ. Ռաֆֆի Պալեան: Ան ամփոփ կերպով ներկայացուց 100 ամեայ կուսակցութեան առաքելութեան, հաւատամքին եւ ազգօգուտ ծառայութեանց մասին: ՌԱԿ-ի գաղափարախօսութեան նուիրուած Արամ Սեփեճեանի գրութիւնը կարդաց Սեւան Տէր Պետրոսեան:

Օրուան գլխաւոր բանախօսը՝ Բանիկ Քէշիշեան հիւանդ ըլլալով իր գրաւոր ելոյթը փոխանորդաբար կարդաց Գեորգ Հալսպեան: Ան՝ առանձնապէս շեշտած էր կուսակցութեան գաղափարախօսութիւնը որ հիմնուած էր ժողովրդավար եւ ազատական սկզբունքներով վրայ: Իր հովանաւորութեամբ հաստատուած էր Թէքէեան մշակութային միութիւնը եւ այլ մարգերու գործունէութիւնները Մայր Հայրենիքի եւ սփիւռքի հայաշատ գաղութներու մէջ:

ՌԱԿ-100-ամեակի առթիւ

շնորհաւորական հռչակագիրներ փոխանցուեցան Գալիֆորնիոյ սենաթի կողմէ (Անթոնիօ Փորթանթինօ) եւ երեսփոխանական ժողովին կողմէ (Էտիւրն Նազարեան):

Ելոյթներ ունեցան նաեւ Հայ Դատի Խորհուրդի կողմէ՝ Շուշան Պաղպուտարեան եւ Երիտասարդութեան անունով Ռիթա Ահարոնեան-Սարուխանեան: Շնորհաւորական գիրերու ընթերցումէն ետք տեղի ունեցաւ տեսահոլովակի ցուցադրութիւն մը «Հեռացած ընկերներ», կատարողութեամբ Դաւիթ Սամուէլեանի:

Գեղարուեստական ճոխ յայտագիր մը գործադրուեցաւ մասնակցութեամբ շնորհալի արուեստագէտ երգիչներու՝ Ազնիւ Աննա Պոյրազեանի, Դաւիթ Սամուէլեանի եւ Ռամկի Մանսուրեանի, նուազակցութեամբ՝ Արա Լէփէճեանի:

Իր փակման խօսքին մէջ Յովնան Սրբազան դրուատանքով արտայայտուեցաւ հայրենանուէր կազմակերպութեանց եւ ի մասնաւորի ՌԱԿ-ի կատարած աշխատանքներուն մասին: Ան կոչ ուղղեց որ մեր ազգային հաստատութիւններուն մէջ տիրապետէ սէրն ու յարգանքը իրարու հանդէպ: Իսկ ակնարկելով հայրենական եւ ազգային-եկեղեցական այժմու իրավիճակին՝ մէկ նախադասութեամբ եզրափակեց «Պէտք ունինք ազգային միասնական վերագարթօնքի մը...»:

Աւարտին տեղի ունեցաւ 100-ամեակի կարկանդակի հատում, ներկայ հիւրերու մասնակցութեամբ, որմէ ետք կատարուեցաւ հիւրասիրութիւն, շնորհաւորութիւններու եւ բարեմաղթանքներու ջերմ մթնոլորտի ներքեւ:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները, մաղթելով յարատեւութիւն իրենց նուիրական առաքելութեան մէջ:

### ԷԱՅԿ Միսկի Խմբի Գործունէութեան

Շարունակուած էջ 2-էն

Մայիսի 23-ին Բրիւսելում, ինչպէս նշեցինք, քննարկուելու են նոյն հարցերը, մասնաւորապէս՝ գործընթացների արագացման խոչընդոտների վերացման քայլերը: Ըստ էութեան՝ բրիւսելեան հանդիպումը ԵԱՀԿ Միսկի խմբի գործունէութեան տրամաբանութեան մէջ է՝ համախառնապէս միմեանց հետ առանց շփման, բայց դէ

ֆակտոյ այդ ձեւաչափում գործելով: Հայկական կողմը պէտք է անի հնարաւորը յարաբերութիւնների հաստատման գործընթացը դէ իւրէ Միսկի խմբի ձեւաչափ տեղափոխելու համար՝ լաւ իմանալով, որ դրա համար իրական հնարաւորութիւններ կատարուէն միայն ուղարկական ճգնաժամի աւարտից յետոյ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»



### ՀԲԸՄԻ «Հայ Կին»ի Յոթի Կանանց Կեդրոնները՝ 20 Տարեկան



#### ԼԻԶԱ ՃԻԿԵՐԵԱՆ ՄԱՆՈՅԵԱՆ

ՀԲԸՄԻ «Հայ Կին»ի Յոթի կանանց կեդրոններու հիմնադրութեան 20րդ ամեակին նուիրուած ճաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, Մայիս 14ին, «Նուր»ի գեղեցիկ հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ սոյն կազմակերպութեան անդամներուն, նուիրատուներուն եւ բարեկամներուն:

«Հայ Կին» կազմակերպութիւնը հիմնուած է 1994ին, Սոնա Եագուպեանի լուսաւոր մտայղացումով: Այս կազմակերպութիւնը իր հիմնադրութեան առաջին իսկ օրէն փաստած է իր գոյութիւնը Հայաստանի Հանրապետութեան ներս, իր բարեփոխական եւ շինիչ աշխատանքներով եւ ձեռնարկներով: Անոր հիմնադրութենէն 8 տարի ետք հիմնուած է Յոթի կանանց կեդրոններէն առաջինը՝ Գիւմրիի մէջ: Հայաստանի եւ Արցախի մէջ գործող 8 կեդրոններուն մէջ յոյս կրնան կը ստանան նախաձեռնողեան, ծննդեան եւ յետծննդեան անհրաժեշտ ծառայութիւնները, եւ կը գտնեն իրենց հոգեկան, ֆիզիքական եւ մտային հարցերու լուծումները:

Վսեմագոյն նախաձեռնութիւն մը այս, որուն շնորհիւ կ'երաշխաւորուի մեր յաջորդ սերունդին գոյատեւումը: Հիմնադիր նախագահուհիին խօսքերով. «Նպատակը՝ սոյն կազմակերպութեան, աղքատութեան դէմ պայքարելն է, յոյս կանանց օժանդակելն է եւ կասեցնելն է մանուկներու կանխահաս մահերը»:

### Ի՞նչ է Ուզում Ընդդիմութիւնը

Շարունակուած էջ 2-էն

ճախ են օգտուում) եւ յայտարարել, որ վերջ, իրենց պայքարը տուեց արդիւնք, ու էԱՀԿ համանախագահ երկրներէն մէկը յայտարարեց, որ կարելոր է Արցախի բնակչութեան դերակատարումը իրենց ապագայի որոշման հարցում ու հպարտանալ, որ դա եղաւ իրենց՝ «դիմադրութեան» շարժման շնորհիւ: Յատկապէս սա կարող էր ինչ-որ չափով փրկել արդէն ձախողուած ու օրէցօր նօսրացող շարքերով ընդդիմութեան դիմագիծը, ու նրանց Աժ վերադառնալու լեզուի մասին հնարաւորութիւն տար:

Նկատենք նաեւ, որ ընդդիմադիր պատգամաւորները, որոնք մէկ ամիս է՝ Ազգային ժողով չեն գնում՝ յայտարարելով, թէ իրենց օրակարգը մէկն է՝ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը, եւ որեւէ այլ հարց չունեն քննարկելու, երէկ «Ժո-



Ձեռնարկին բացման խօսքը կատարեց կազմակերպութեան անդամուհի էլիթապէթ Քապանեան: Ապա անդամուհի Լորա Գուլումձեան երկու շնորհաւորագիրներ ընթերցեց, առաջինը՝ Հայաստանի Պետական համալսարանին տնօրէն Ա. Մկրտչեանին եւ երկրորդը՝ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակեանին: Երկուքն ալ դրուատած էին «Հայ Կին» կազմակերպութեան արձանագրած յաջողութիւնները:

Ապա, Նելլի Եագուպեան փոխանցեց, որ ցարդ իրենց կեդրոններու աշխատանքներուն ծիրէն ներս օժանդակած են 5000էն աւելի մայրերու, որոնք իրենց մանուկները լոյս աշխարհ բերած են եւ յատուկ հոգատարութիւն ստացած են, իսկ մեծ մայրերուն համար ալ շատ շինիչ դասախօսութիւններ տրամադրուած են սոյն կեդրոններէն ներս: Նելլի Եագուպեանի խօս-

քէն ետք, տեսանիւթ մը ցուցադրուեցաւ, ուր Հայաստանի Յոթի կանանց 8 կեդրոններու պատասխանատուները շնորհաւորեցին անոր 20րդ ամեակը եւ յարատեւ յաջողութիւններ մաղթեցին կեդրոններուն սատար կանգնող անդամներուն, վարչութեան կազմին եւ հիմնադիր Սոնա Եագուպեանին:

Հոս կ'արժէ նշել, որ Հայաստանի Պետական համալսարանէն շրջանաւարտ ուսանողներ, ըստ իրենց մասնագիտութեան, ներդրում կ'ունենան աշխատակցելով սոյն կեդրոններէն ներս, ձեռք ձգելով փորձառութիւն եւ միեւնոյն ժամանակ ընկերահոգեբանական հարցերով օժանդակելով եւ ուղղութիւն ցոյց տալով մեր հայրենի մայրերուն:

Վերոնշեալ աշխատանքները կ'իրագործուին բարերար-հովանաւորներու կատարած նուիրատուութիւններով: Այս հաւաքոյթին շնորհակալագիրներ բաժնուեցան բոլոր այն հովանաւորներուն, որոնք իրենց լուծման տալով գիտակցած են Յոթի կանանց կեդրոններուն անհրաժեշտ ու շինիչ աշխատանքներուն կարեւորութիւնը:

Հաւաքոյթին վերջաւորութեան խօսք առաւ նախագահուհի Սոնա Եագուպեան եւ հակիրճ պատմականը տուաւ սոյն կազմակերպութեան հիմնադրութեան դրդապատճառներուն եւ դիմագրաւած դժուարութիւններուն մասին: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք հաւատարմութեամբ կազմակերպութեան առաքելութեան եւ առաջին օրէն իսկ նեցուկ կանգնած են սոյն օգտաշատ եւ կարեւոր

աշխատանքին: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց սոյն ձեռնարկին կազմակերպիչ անդամ վարդենի Երջանեանին բժախնդիր աշխատանքին, որուն արգասիքն էր գեղեցիկօրէն կազմակերպուած ու ծրագրուած հաւաքը: Նաեւ յատուկ շնորհակալական խօսք ուղղեց Անի Պապեանին, որ հաւատարմօրէն եւ յարատեւօրէն երկար տարիներու վրայ իր աջակցութիւնը եւ ամսական նուիրատուութիւնը կը կատարէ:

Եւ ապա Սոնա Եագուպեան յայտարարեց, որ Եղվարդի իրենց կեդրոնը անուանուած է իրենց անդամուհիներէն՝ ձենի Այնթէպլեանի վաղամեռիկ դուստրին՝ Սէրա Այնթէպլեանին անունով: Ձենին սոյն կազմակերպութեան աշխոյժ եւ հաւատարմ անդամուհիներէն մէկն է, եւ մէկ ու կէս ամիս առաջ 20ամեայ դուստրը կորսնցուց ինքնաշարժի անողոք արկածով: Սէրան օրինակելի գաւակը, հեզահամբոյր սկառսոն ու փայլուն ապագայ խոստացող աշակերտուհին, Փաստինա գաղութէն ներս ճանչցուած էր իր ազնիւ ու մաքուր հոգիով, գեղեցիկ ու հողորդակից ժպիտով եւ փայլուն միտքով ու աշխատասիրութեամբ:

Վարձքը կատար բոլորին եւ յոյսով ենք, որ Եղվարդի Սէրա Այնթէպլեանի յիշատակին նուիրուած կեդրոնէն ներս եւ ինչպէս նաեւ մնացեալ բոլոր կեդրոններէն ներս, հայրենի մայրեր՝ իրենց հոգեմտային եւ ֆիզիքական օժանդակութիւնը ստանալով, պիտի ծնանին Սէրային նման հայրենասէր, հայասէր եւ խելացի հայ երեխաներ:

PLEASE JOIN US FOR

The Dedication of

THE DR. GARBIS DER-YEGHAIYAN

Memorial Peace Garden

---

MILLS PARK  
5601 WHEELER AVE.  
LA VERNE, CA 91750

SATURDAY  
JUNE 11, 2022  
10:00 AM

RSVP BY MAY 31  
TO: LAVERNEROTARY  
@YAHOO.COM

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի Անուան Յիշատակի Պուրակի Բացում

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի անուան յիշատակի պուրակի հանդիսաւոր բացումը տեղի պիտի ունենայ Յունիս 11-ին, կէսօրէն առաջ ժամը 10:00ին: Հասցէ՝ Mills Park, 5001 Wheeler Avenue, La Verne, CA 91750: Սիրով կը հրաւիրուի հասարակութիւնը: Աւարտին՝ հիւրասիրութիւն: Ձեր ներկայութեան մասին իմացնել մինչեւ Մայիս 31, հետեւեալ հասցէով՝ email: LAVERNEROTARY@yahoo.com



## Pashinyan and Aliyev Agree on Launching Border Demarcation Commission



BRUSSELS — Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev agreed to convene a border commission in the near future and meet again in Brussels by August.

Armenia's and Azerbaijan's leaders were hosted by European Council President Charles Michel on Monday for the second time in less than two months.

Michel summarized the results of the trilateral meeting in a statement posted on the website of the European Council, Hel described the discussions

in Brussels as frank and productive.

"Today I hosted President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia again. This was our third discussion in this format. We focused on the situation in the South Caucasus and the development of EU relations with both countries as well as the broader region.

The discussion was frank and productive. We reviewed the entire set of issues. We had a detailed discussion

Continued on page 4

## Ambassador Lynne Tracy: United States Committed to Continue Helping Armenian People Build Future Based on Shared Democratic Values



YEREVAN — In an interview with the state-run Armenpress news agency on the occasion of the 30th anniversary of the establishment of diplomatic relations between Armenia and the United States, US Ambassador Lynne Tracy has voiced support for the Armenian government's democratic and economic reform agenda.

"We are committed to continue helping the Armenian people build a future based on shared democratic values, a path they chose in 2018 and to which they recommitted themselves during the 2021 parliamentary election," said Tracy.

During the interview the Ambassador talked about her diplomatic mission in Armenia, the past and present experience, her impressions on the country, the agenda of the Armenian-American relations, as well as regional and international developments.


She also touched upon the general dynamics of the Armenia-U.S. relations over the past 30 years, their development prospects, sharing important information about the current development of the bilateral ties.

Ambassador Tracy said "the U.S.

Continued on page 3

## Statement Regarding the Events Taking Place in Armenia

Diaspora Armenians in general and Armenian-Americans in particular are following the events taking place in the Homeland these days, where a group of opposition members are trying to achieve the resignation of the Prime Minister and the government through rallies, marches and other street events. By exercising their democratic rights, the protesters have the opportunity to express their views freely and to convey them to the people. However, very often the same demonstrators violate the rights of other citizens who do not share their views, create incidents with law enforcement, speak on platforms which reject dissent, insult human dignity and sow hatred.



Over the past month or so, the opposition's actions have made it more than clear that the overwhelming majority of the people of Armenia do not share their views. Many are even calling for the authorities to take more drastic measures to ensure their right to free movement.

In recent days, opposition circles have been trying to portray the Diaspora as supporting their movement, and some media outlets are spreading misinformation in that direction.

Based on the above, we want to make the following clarifications:

I. The Diaspora has never been and never will be under one governing entity. Various parties, organizations and diverse groups operate there. Therefore, no organization has the right to speak on behalf of all Diaspora Armenians, and especially American Armenians.

II. The campaign against the US Ambassador and the demands to recall her do not represent the point of view of our party and the majority of Armenian-Americans. We find that the US Ambassador is fulfilling her responsibilities and impartially presenting the current situation in Armenia.

III. The Diaspora, despite its internal divisions and disagreements, unconditionally stands by the statehood of Armenia and the protection of the rights of the people of Artsakh.

Respecting the free choice made by the citizens of Armenia a year ago, through fair and democratic elections, we continue to support the authorities' domestic and foreign policies, and are convinced that they are in the interest of Armenia and Armenians.

Social Democrat Hunchakian Party  
Executive Committee, Western USA

## Nikol Pashinyan, Antony Blinken Discus Regional Security Issues and Armenia-Turkey Relations



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan had a telephone conversation with U.S. Secretary of State Antony Blinken on Tuesday, Pashinyan's press service reported.

The Secretary of State praised the efforts of the Government of the Republic of Armenia aimed at estab-

lishing peace and stability in the region, as well as the process of democratic reforms in Armenia.

The interlocutors exchanged views on the settlement of the Nagorno Karabakh conflict, opening of regional communications, regional security is-

Continued on page 4



## Armenian PM, Lithuanian President Discuss Bilateral Issues, Regional Developments



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan and visiting Lithuanian President Gitanas Nauseda discussed today the development of bilateral relations as well as the regional situation at a meeting in Yerevan, the Armenian government press office reported.

It said the interlocutors discussed the agenda of Armenia-Lithuania relations and development prospects. Nikol Pashinyan praised Lithuania's support for Armenia's democracy, in response to which Gitanas Nauseda reaffirmed Lithuania's readiness to continue supporting Armenia's democratic path and the government's reform agenda.

The parties reaffirmed their readiness to deepen mutually beneficial cooperation in the economic, technological, educational and cultural spheres. During the meeting the sides exchanged views on regional situation and developments.

The Prime Minister presented the positions of the Republic of Armenia on the demarcation and delimitation of the Armenian-Azerbaijani border, the settlement of the Nagorno Karabakh conflict, the unblocking of communication channels. Nikol Pashinyan referred to the agreements reached during the meetings mediated by international partners, emphasizing that Armenia is guided by the peace agenda, but that process cannot be unilateral. In this context, the Prime Minister attached importance to the support of the international community and its targeted response to actions aimed at

disrupting stability in the region.

Gitanas Nauseda noted that peace, stability and economic growth are of common interest to the countries of the region, Lithuania and the European Union, and that Lithuania will continue to contribute to the establishment of regional dialogue, stability and prosperity.

Nikol Pashinyan thanked for that readiness and praised the efforts of the EU, President of the European Council Charles Michel, which, together with the efforts of other international partners, contribute to the creation of an atmosphere of dialogue.

The sides stressed the need for a comprehensive settlement of the Nagorno-Karabakh conflict under the auspices of the OSCE Minsk Group Co-Chairs. Issues related to the preservation of the Armenian religious and cultural heritage in Artsakh and the involvement of UNESCO in that process were also touched upon.

The sides emphasized the role of democracy in serving security challenges, protecting human rights, the rule of law, the success in sectoral reforms, and ensuring economic growth.

The President of Lithuania noted that his country has some experience and is ready to share with Armenia, to exchange information. Prime Minister Pashinyan welcomed the proposal, noting that Armenia attaches importance to the study of the experience of countries with successful development.

## Armenia, Vatican Mark 30 Years of Diplomatic Relations



Armenia Foreign Minister Ararat Mirzoyan and Secretary for Relations with States within the Holy See's Secretariat of State Archbishop Paul Gallagher today marked the thirtieth anniversary of diplomatic relations between the Holy See and the Republic of Armenia with an exchange of messages.

Mirzoyan, according to a state-

ment released by his office, expressed his readiness to continue the pursuit of lasting international peace and sustainable development, as well as the pursuit of a peaceful co-existence.

Mirzoyan also thanked Pope Francis for his principled position on the Armenian Genocide.

The Vatican's Foreign Minister stressed that the recently opened Ap-

## Artsakh Is Not Only a Piece of Territory, It Is People, Whose Dignity Should Be Respected, Armenian FM Says

TURIN (Armradio) — On May 20, the 132nd Ministerial Session of the Council of Europe was held in Turin, Italy, where Ararat Mirzoyan, the Minister of Foreign Affairs of the Republic of Armenia, participated and delivered remarks. In his speech, Minister Mirzoyan, particularly, noted:

The need for peace and stability is long overdue for our region, Armenian Foreign Minister Ararat Mirzoyan said at the 132nd Ministerial Session of the Council of Europe in Turin, Italy.

“Today we are witnessing the looming demise of the security architecture which certainly has not started just recently during the last couple of months. We felt the shatter of multilateralism, the crack of international institutions and disrespect for fundamental rules less than two years ago when Azerbaijan, violating the principle of non-use of force, unleashed a war against Nagorno-Karabakh and its people. It's been a year and a half since those horrible times, and Azerbaijan claims that the Nagorno-Karabakh issue is solved and they are ready for peace,” the Foreign Minister stated.

“I would sound naive but if it's true why we still struggle for the rights of prisoners of war and detainees and their immediate release and repatriation. Why do we still struggle for cultural rights of people and policy-driven demolition of Armenian cultural heritage under Azerbaijani control? Why do we struggle for the right of children to get quality education as their schools are frequently under fire? Why do we struggle for the right of people to have basic living standards in their houses as the only gas pipeline is being cut?” he continued.



“I can continue bringing new examples but to put it briefly: why we struggle to make Azerbaijan understand that Nagorno Karabakh is not only a piece of territory, it is people, whose dignity should be respected,” he said, adding that “as the devotion of human rights brought us all here then this is the issue for all of us.”

The Foreign Minister noted that the Government of Armenia is committed to the efforts to bring peace and prosperity to the region and has reiterated on numerous occasions its readiness to immediately start genuine and constructive negotiations on normalization of relations with Azerbaijan.

“And in this regard, the OSCE Minsk Group Co-Chairmanship has a key role to play in advancing the peace process. But we strongly believe that the Council of Europe also, within its mandate, should be active in supporting that process,” Ararat Mirzoyan said.

He concluded by saying that “need for peace and stability is long overdue for our region.”

## Parliamentary Committee OKs Enhancement of Stolen Asset Recovery Law

YEREVAN — The Parliamentary Committee on State-Legal Affairs approved the government-authored bill seeking to make amendments into the stolen asset recovery law.

The stolen asset recovery law, officially known as the Law on Confiscation of Illegally-Obtained Assets, was adopted by parliament in 2020 April. In September of 2020 the division in charge of investigating alleged illicitly acquired assets was launched in the general prosecution.

Deputy Prosecutor-General Srбуhi Galyan said at the committee meeting that the amendments will expand the meaning of the term “official person” and in addition to public office holders anyone having the obligation to asset disclosure in terms of public service will be considered an “official person”.

In addition, the amendments seek to authorize the investigative body to launch studies at its own initiative, but



only in the event of suspicions arising on an illegally-obtained asset during existing proceedings.

The term of the studies will be extended to 3 years instead of 2, among other envisaged changes aimed at more effective and comprehensive studies of suspected cases.

ostolic Diocese in Yerevan is clear evidence of the friendly and genuine development of relations between the Holy See and Armenia in various spheres.

Archbishop Gallagher added that the Holy See intends to further strengthen cooperation with Armenia to promote moral values, justice and peace.



## Yerevan Tech Forum 2022 Kicks Off



YEREVAN -- Yerevan Tech Forum 2022 has kicked off in the Armenian capital.

More than 25 local and international speakers, more than 30 companies and 1000 participants are in attendance.

Opening remarks were delivered by Sergey Usnunts, the founder of Skill – the company that initiated the Yerevan Tech Forum 2022, and the Minister of High-Tech Industry Robert Khachatryan.

Khachatryan said the event can seriously promote the development and progress of modern technology-based economy in Armenia.

“Parallel to development, it is important to address the new challenges emerging in the rapidly chang-

ing world, with the development of effective solutions and management being a highly important task for every country. Leaders from the public administration system, tech experts and companies, business representatives have gathered here today to discuss these challenges and offer solutions,” he said.

Minister of Economy Vahan Kerobyan and the Yerevan Mayor Hrachya Sargsyan also delivered remarks at panel discussions.

Kerobyan said they want Armenia to become a tech center from where businesses will work for the world.

Tesla Energy, Synopsys, Tumo and many other companies are represented at the forum.

## Armenia Diaspora Agency Receives Around 4000 Repatriation Applications in 4 Months

YEREVAN — The Office of the High Commissioner for Diaspora Affairs received around 4000 repatriation applications in 4 months.

Hovhannes Alexanyan, the Director of the Department of Strategy Development at the Office of the High Commissioner for Diaspora Affairs said at a press conference that most of the applications concern the citizenship acquisition procedures, enrollment in educational institutions, healthcare issues, relocating businesses to Armenia and possibilities of importing personal-use cargo through customs borders.

“The repatriation process is rather difficult; there are cases when we work with families for 6 months or even a year before they arrive to Armenia. Many of them want to get citizenship, status initially and then benefit from the privileges envisaged for repatriates. For example, in 2021 we had around 7300 compatriots from 45 countries who obtained Armenian citizenship. Most of them come from Russia, Lebanon, Iran, Georgia, Syria, the United States and European countries. Last year, 2070 of our compatriots obtained the status of permanent residency or special residency in Armenia. Surely it is difficult to say what percentage of our compatriots are permanently residing in Armenia, but at least it is obvious that half of them are in Armenia. Many of them



have dual citizenship, even three citizenships and are organizing their lives in different countries,” Alexanyan said.

Alexanyan said in the context of repatriation they view not only the compatriots representing the classic Diaspora, but also those who left Armenia years ago due to socio-economic or other reasons and are now returning.

“Repatriates encounter several issues, particularly accommodation. They even apply to us with requests to find apartments for rent. They ask for legal support while buying apartments. The next issue concerns customs regulations. Our legislation enables repatriates to move their personal property to Armenia without customs payments,” Alexanyan said.

## Armenian IT Sector Adds Thousands of New Jobs



YEREVAN — The government reported on Monday a nearly 50 percent surge in the number of officially registered workers in Armenia’s information technology sector, which appears to reflect a recent influx of skilled migrants from Russia.

Government data revealed by Economy Minister Vahan Kerobyan shows that local software development firms employed 20,000 people as of the end of April, up from about 13,500 in the year-earlier period.

In a Facebook post, Kerobyan said that the number of tech jobs registered with tax authorities rose by 2,300 in April alone. He did not comment on the reasons for the sharp increase.

The IT industry dominated by software developers has long been the most dynamic sector of the Armenian

economy, having grown at double-digit annual rates since the early 2000s. A list of the country’s 1,000 largest corporate taxpayers released by the State Revenue Committee in January included 36 tech firms.

Thousands of mostly young Russians relocated to Armenia following Russia’s February 24 invasion of Ukraine. Many of them are computer programmers and other IT professionals.

Already on March 1, Kerobyan announced that some Russian tech companies are moving operations to Armenia to evade Western sanctions imposed on Moscow. The sanctions restricted their access to high technology and complicated their financial transactions abroad.

The precise number of such firms that have partly or fully relocated their personnel to the South Caucasus country is not yet known.

## ANIF Has Invested Around \$214 Million in Various Sectors of Armenian Economy

Armenian National Interests Fund (ANIF) has released the organization’s 2019-2021 report. It summarizes all the projects implemented by ANIF during the reporting period. Some key data are presented below.

In total ANIF is investing around \$214 million in various sectors of the Armenian economy through joint projects with partners. 91% of investments is contributed by partners, 9% by ANIF.

During 2.5 years of its activities, ANIF has signed more than a dozen memorandums and other documents on cooperation with internationally recognized companies and organizations. As a result of ANIF’s efforts, two major investment projects of strategic importance for the country were launched.

200 MW photovoltaic solar power plant project “Ayg-1” in the territory of Talin-Dashtadem communities of Aragatsotn region in cooperation with Abu Dhabi’s Masdar company.

Establishment of Fly Arna Armenian National Airlines jointly with Air Arabia.

ANIF’s subsidiary “Entrepre-



neur + State Investment Fund” continues to support local businesses through equity investments. To date, the Fund has implemented a total of investments of about \$10 million in 6 companies, that will create around 170 jobs. “Father and Son Yeremyans,” “Amber Capital,” “Food Republic,” “Apaga Projects,” “Global Connect” are partner companies, with whom ANIF has started new business projects.

The purpose of the Fund is to stimulate the inflow of private capital into the economy, thereby ensuring sustainable long-term capital growth and expansion of economic opportunities.

## Ambassador Lynne Tracy

Continued from page 1

Embassy is committed to supporting Armenia’s democratic and economic reform agenda and partnering with Armenia to achieve its goals”.

“We are committed to continue

helping the Armenian people build a future based on shared democratic values, a path they chose in 2018 and to which they recommitted themselves during the 2021 parliamentary election”, Ambassador Lynne Tracy said.




## Dr. Dennis Papazian's Memoir "From My Life and Thought" Published by The Press at Fresno State

FRESNO — The Armenian Series of The Press at California State University, Fresno announces the publication of its fifteenth volume, "From My Life and Thought: Reflections on an Armenian-American Journey", a memoir by Dennis R. Papazian, a well-known community leader, Professor Emeritus of History, and founding Director of the Armenian Research Center at the University of Michigan, Dearborn.

In "From My Life and Thought: Reflections on an Armenian-American Journey", Dennis Papazian shares his reflections on a quintessentially twentieth-century American life shaped by the challenges of the immigrant experience, his family's struggle to create a life in a new land, and his determined efforts to secure an education that would ensure a life of security and the promise of the American dream.

Born ninety years ago in the pre-World War II, pre-civil rights American South of Armenian immigrant parents from Istanbul, Turkey, Papazian pursued a Ph.D. in Russian history, becoming one of the first American students to study in the then Soviet Union during the height of the Cold War. Not only did this experience open the world to him, it also placed him in the center of major geo-political events, teaching him nuance and perspective that would lead him to become a highly sought analyst as the Soviet Union broke apart decades later.

Upon his return to Michigan, Papazian went on to live a life of contribution and service as he engaged in a decades-long career in higher education as an educator, scholar, and administrator. During this period, he also became a key leader in the emergence of an Armenian-American community just find-



ing its footing fifty years after the 1915 Armenian Genocide, where he made significant contributions to multiple Armenian community, religious, academic and political institutions.

In "From My Life and Thought", Papazian shares his resilience, keen sense of perception, and vision, as well as the memorable characters he meets along the way, as he reflects on his consequential, eventful, and at times surprising life. Through it all, he writes with humor and wit, as he tells a story that will inspire readers of all generations and backgrounds and give hope to all who join him on his journey.

The Armenian Series at California State University, Fresno was established through the generous support of the M. Victoria Karagozian Kazan and Henry S. Khanzadian Kazan Endowment. Prof. Barlow Der Mugrdchian is the general editor of the series.

From My Life and Thought: Reflections on an Armenian-American Journey is available through Abril Books or through the NAASR bookstore.

## Pashinyan and Aliyev Agree

Continued from page 1

on humanitarian issues, including demining, and efforts to free detainees and address the fate of missing persons.

We reached the following outcomes:

Border issues

The first joint meeting of the Border Commissions will take place on the inter-state border in the coming days. It will address all questions related to the delimitation of the border and how best to ensure a stable situation.

Connectivity

The leaders agreed on the need to proceed with unblocking the transport links. They agreed on the principles governing transit between western Azerbaijan and Nakhichevan, and between different parts of Armenia via Azerbaijan, as well as international transport through communications infrastructure of both countries. Notably they agreed on principles of border administration, security, land fees but

also customs in the context of international transport. The Deputy Prime Ministers will take this work forward in the coming days.

Peace Agreement

The leaders agreed to advance discussions on the future peace treaty governing inter-state relations between Armenia and Azerbaijan. Teams led by the Foreign Ministers will take forward this process in the coming weeks. In addition to this track, I also stressed to both leaders that it was necessary that the rights and security of the ethnic Armenian population in Karabakh be addressed.

Socio-economic development

The EU will take forward with both parties the work of the Economic Advisory Group, which seeks to advance economic development for the benefit of both countries and their populations.

I also stressed the importance of preparing the populations for long-term sustainable peace. The EU is ready to step up its support.

## Lory Tatoulian to Serve as Mistress of Ceremonies For the 46th Annual Debutante Ball on June 12 2022

LOS ANGELES -- The Ladies Auxiliary of the Western Diocese of the Armenian Church are pleased to announce that noted comedian, actress and writer Lory Tatoulian will serve as the Mistress of Ceremonies for the 46th Annual Debutante Ball to be held on June 12 2022 at the

Beverly Wilshire Hotel. Cindy Norian, Chair of the Ladies Auxiliary, stated that Lory Tatoulian is the perfect choice to highlight this traditional event and to recognize her distinguished career.

Since 2009 Lory Tatoulian has created, written and produced 10 different installments of The Big Bad Armo Show which has toured nationwide, including three sold-out runs Off-Broadway in New York's Symphony Space, the Cowell Theatre in San Francisco, San Diego Repertory Theatre and the Colony Theatre in Los Angeles. Currently the show is featured in the new PBS Documentary, What Will Become Of Us. She has also written and performed in two award winning solo shows: Sitting Twisted, Talking Straight and Autosapiens that debuted at the San Diego Repertory Theatre. Most recently, Tatoulian has been hired as writer for the feature animation films including Warner Brother's Smallfoot and Sony Pictures Surf's Up. Her comedic chronicles can be read on NPR's Multi-American blog. She has been awarded a grant from the National Endowment of the Arts for her work in the theater and received three proclamations from the City of Los Angeles and the State of California. She is a theater consultant with Pasadena Unified School District, an alumni of San Diego State Theater Department, The American Academy of Dramatic Arts and the world famous Groundlings Theatre, where she also teaches improv and sketch comedy. She is back on the stage, performing live theater and currently working on a televised sketch show "stay tuned."

Lory Tatoulian is married to the former Mayor of Montebello, Jack Hadjinian. Lory attributes her passion



for the arts and community from her parents, Archpriest Der Datev and Yeretzgeen Araxy Tatoulian; whose partnership she states has always been upon the sacred calling of community building and fostering a cultural and spiritual life; that their home life extended beyond the immediate family and always included the greater community with their hearts and doors always open, which Lory states has always fueled her creativity. As long as she can remember Lory has been active in the essential programs of the Western Diocese: a camper and volunteer at the Hye Camp, A.C.Y.O. Sports Weekend and Conventions, as well as attending church. She states that the Armenian Church and Faith have always been the foundation of who she is and where she belongs.

The 46th Annual Debutante Ball will be held on June 12 at the Beverly Wilshire Hotel, 9500 Wilshire Blvd., Beverly Hills, CA 90212. The evening will begin with a Cocktail Reception at 5:00 p.m., the presentation of the debutantes at 6:00 p.m., followed by dinner and dancing at 7:00 p.m. Families and friends will have the opportunity to send congratulatory messages to a keepsake booklet which will also contain the pictures and resumes of the Debutantes and Escorts.

For ticket information contact Michelle Chalfant (323) 449-3769. For messages in the booklet, contact Janet Roberts (949) 500-1367.

## Nikol Pashinyan, Antony Blinken

Continued from page 1

sues.

Prime Minister Pashinyan shared his impressions of the trilateral meeting held in Brussels on May 22, emphasizing that the meeting was generally positive, but added that the comments that followed had nothing to do with the content of the discussions.

The Secretary of State reaffirmed the US readiness to continue support-

We agreed to remain in close contact and will meet again in the same format by July/August.'

The two leaders, who had separate meetings with European Council President Charles Michel before having a trilateral meeting, also discussed the Nagorno-Karabakh issue and advancing discussions on the

ing Armenia's democratic reforms, the settlement of the Nagorno-Karabakh conflict, the demarcation of the Armenia-Azerbaijan border, the opening of regional communications, and the establishment of regional stability.

Reference was also made to the Armenia-Turkey discussions at the level of special representatives. The interlocutors agreed to continue Armenia-US high-level contacts.

future peace treaty governing inter-state relations between Armenia and Azerbaijan.

Armenia's Pashinyan was said to have discussed with Michel the situation around Nagorno-Karabakh, humanitarian issues and stressed the need to resolve them, the Armenian prime minister's office said.



# Աւագ Ընկերոջ Յիշատակին (Արտաշէս Քալանթարեան)

## ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Այս օրերին Երեւանի փողոցներին մէկը անուանակոչուել է նշանաւոր գրող, դրամատուրգ, Ֆելիետոնիստ (Ֆելիետոն,- իրական փաստերի վրայ հիմնուած կծու, ծաղրալի գրութիւն) հասարակական գործիչ Արտաշէս Քալանթարեանի անունով:

Անցեալ դարի 60-ականներին վերջերին, ես արդէն քիչ թէ շատ ճանաչուած լրագրող էի համարուում: Մամուլում տպագրուած իմ նիւթերը կարդալուց բացի, ազատ հօրէն փնտուռում էի Արտաշէս Քալանթարեանի Ֆելիետոնները:

Աշխատանքի բերումով, մեր մտերմութիւնը սահմանափակուած էր միայն իրար ողջունելով: Եւ ահա, տարիներ անց, արդէն Ամերիկայում...

Խօսքը տալիս եմ իրեն՝ Արտաշէս Քալանթարեանին, որի մի քանի պարբերութիւնը վերցուած է անձիս վերաբերող նրա «Կարօտի կանչը» յօդուածից («Խորհրդային Հայաստան», Երեւան, 10 Ապրիլ, 1990):

Մի քանի ամիս առաջ Լոս Անջելէս քաղաքի արուարձաններին մէկով անցնելիս, մէկ էլ յանկարծ մի շինութեան վրայ անգլերէնից բացի հայերէնով կարդացի՝ «Տպարան Անի»: Ես ինչպէ՞ս կարող էի արտասահմանում չմտնել մի տպարան, որի անունը «Անի» է: Գրասենեակում նստած էր սեւ մագերով ու սեւ աչք-ունքով շատ գեղեցիկ մի երիտասարդ:

- Հայ ե՞ս տղայ ջան,- հարցրի ես:

- Այո՛, հայ եմ, տեսնում եմ՝ դուք էլ էք հայ, հայրենիքի՞ց էք:

- Գրող է,- ներկայացրեց ինձ իմ ընկեր Յակոբը:

- Ես «Անի» տպարանի տէրն եմ, իմ անունը Արամ է: Հաւանաբար դուք իմ հայրիկին կը ճանաչէք:

- Ո՞վ է հայրիկդ տղաս:

- Հենրիկ Անասեանը:

- Հենրիկ Անասեանը,- նշանաւոր արեւելագետ, բանասէր ու պատմաբան Յակոբ Անասեանի որդի՞ն:

... Այսինքն՝ ինչո՞ւ եմ հարցնում: Հենրիկ Անասեանը ճիշդ այդպիսի աչք-ունքով մի երիտասարդ էր, որ թղթակցութիւններ էր բերում «Երեւան» թերթի խմբագրութիւն: Յետոյ շրջուեց միանգամից, որոշեց դիրիժոր դառնալ, ավարտեց կոնսերվատորիան եւ կարճ ժամանակում համբաւ ձեռք բերեց որպէս Հանրապետութեան նշանաւոր խմբավարներից մէկը:

- Կ'ուզէ՞ք հայրիկիս հետ խօսել, շատ կ' ուրախանայ,- ասաց Արամը՝ հեռախօսի վրայ թուէր հաւաքելով:

Հենց այսպէս, միանգամայն պատահականօրէն ես գտայ Երեւանցի իմ հին գրչընկերոջն ու բարեկամին:

- Հայրի՛կ, գիտե՞ս ով է հիմա իմ տպարանում,- ընկալուչի միջոց բարձրաձայնում է

Արամս, - որ ասեմ՝ չես հաւատայ, քո ընկերը, գրող Արտաշէս Քալանթարեանը

- Ի՞նչ... Արտաշէ՞սը..., ո՞նց, ի՞նչպէս...

- Ուզում ե՞ս խօսել նրա հետ:

- Ո՛չ, ո՛չ տղաս, ժամանակ չկորցնենք, ես մի կէս ժամից այդտեղ կը լինեմ, թող տեղ չգայ,



գբաղեցրու մինչեւ տեղ հասնեմ:

Քսան վայրկեանից՝ տպարանում եմ: Գրկում ենք իրար ես ու Արտաշէսը, փաթաթուած, ինչո՞ւ ոչ՝ համբուրում նաեւ կորած եղբորը գտած լինելու խաբկանքի նման:

- Հենրիկ, ծանօթացիր, ընկերս է՝ Յակոբը, նրա հրաւերով ենք եկել ես ու կինս: Դժբախտաբար մեր ժամանումը համընկաւ նրա կնոջ թաղման արարողութեանը: Մէկ շաբաթ է, որ այստեղ ենք, եւ, հաւանաբար, ժամանակը չլրացած, մի քանի օրից կը վերադառնանք Հայաստան:

- Ի՞նչ... վերադառնա՞լ..., ինչո՞ւ, նման բան չկայ, չի կարող լինել,- էս ի՞նչ է ասում Արտաշէսը Յակոբը...

- Ի՞նչ ասեմ Հենրիկ, դու վաղուց ես Հոլիվուդում, ուր կեանք կայ, եռուզեռ: Էս Մոնթիպելլոն անապատի պէս տեղ է: Հայկական միջավայր չկայ: Ձանձրոյթից չգիտես ինչ անել: Ես էլ հնարաւորութիւն չունեմ աշխատանքս թողնել ու մերոնցով գբաղուել:

- Լաւ, Յակոբ ջան, կարծում եմ չես նեղանայ եթէ ընկերոջդ տանեմ մեր տուն, ուր գնացող-էկողը շատ շարժում կայ, ես էլ ազատ ժամանակ ունեմ, հը՛, ի՞նչ ես ասում:

- Ի՞նչ պիտի ասեմ եղբայր, շնորհակալ եմ, դու ինձ ազատեցիր մեծ հոգսից: ...

- Լաւ, լա՛ւ, Յակոբ ջան, մի հուզուիր, որոշուած է, , իսկ դու՛ Արամ ջան, շրջուելով տղայիս կողմը ասացի,- գործը թող, թնի տուն, մամայիդ հետ կարգադրութիւններ արէք, ես Արտաշէսին եւ կնոջը բերում եմ մեր տուն:

... Արտաշէսի եւ իր կնոջ՝ Ջուլիետայի մեր տուն մտնելու առաջին իսկ վայրկեանից մի տեսակ շնացաւ մեր տունը: Հրճուանք, բերկրանք, իսկական երեւանեան խինդն ու ուրախութիւնը քսան օր անդադրում թեւածեցին մեր տան մէջ եւ աւօրեայում: Ո՛չ մի օտարութեան զգացողութիւն միմեանց նկատմամբ: Արտաշէսի անմիջական, անկեղծ, սրտբաց վարակիչ բնաւորութիւնը հրճուանք էր աւազացնում իրեն շրջապատող մարդկանց մօտ:

- Հենրիկ, սա տղուն հոգ տարէք, իրեն համար լաւ չէ այսքան աշխուժ ըլլալը,- ասաց արտաբան, ՄԱՍԻՍ շաբաթաթերթի խմբագիր Յարութիւն Սաղրեանը՝ մեր տան բակի տաղաւարի տակ, ինչո՞քի պահին: Մինչ այդ օրը, իմ խնդրանքին ընդառաջելով, դոկտորը եւ մէկ օտար ճանաչուած սրտաբան գտան, որ Արտաշէսի

սիրտը յօգնած է եւ անհրաժեշտ է լուրջ հետազոտութիւն անել:

Ասեա՛լ՝ ասեա՛ միեւնոյնն է, այդպիսին էր Արտաշէսը, իրադրութեան, միջավայրի տէրն ու սնօրէնը, սեղանապետն (թամադայ) ու ժողովրդական երգերի փայլուն կատարողը: Իմանալով իր սրտի տկար լինելը, նա երբեք իրեն չէր խնայում: Նա գերագոյն հաճոյք էր ստանում շուրջիններին ուրախ պահելով: Նրա համով-հոտով անէկոտները ներկայացնելու վարպետութիւնից բոլորս ուշաթափ էինք լինում բարձրաձայն հռնոցից:

Երբեք չէիր ասի, որ նա այն լուրջ, խոհուն մտաւորական գրողն է, որի սուր, խայթող գրիչից սարսափում էին երկրի նախարարներն անգամ:

Մեր քսանօրեայ համատեղ կեցութեան ընթացքում ես գգում էի, որ Արտաշէսը մի տեսակ շտապում էր, ուզում էր շատ բան տեսնել, շատ բան վայելել: Մանկան հրճուանք էր ապրում Լաս Վեգասի ներկայացումները դիտելիս: Հագիւ էինք կարողանում նրան հեռացնել խաղատների մեքենաներից, որոնցից վար սահող մետաղադրամների շխշիկոցի հաճոյքից վեր էր թռնում նստած տեղից եւ ի լուր ամէնի բղաւում,- էկա՛ւ Հենրիկ, էկա՛ւ,- չմոռանալով մի նոր սիգարետ տանել շրթներին:

Լաս Վեգասից ոչ պակաս հաճոյք վայելեց իմ բարի Արտաշէսը Դիզնիլենդում եւ Հոլիվուդի Ֆիլմաշխարհ՝ Universal Studio-յում:

...Անցան ուրախ եւ երջանիկ օրերը: Բաժանման պահը ստկալի էր: 20 օր տեսած մեր համատեղ կեանքը այնպէս էր մեզ մտերմացրել, որ իւրաքանչիւրիս թւում էր թէ մի ամբողջ կեանք ենք մի յարկի տակ անցկացրել: Միակ միտիթա-

րութիւնն այն էր, որ մենք հինգ ամիս անց կրկին հանդիպելու էինք Մայր Հայրենիքում:

1990 թուականի Ապրիլ 12-ին եւ 14-ին հեղինակային համերգներով ելոյթ էի ունենալու Հայֆիլհարմոնիայի Համերգային Մեծ դահլիճում: 43 հոգուց կազմուած երգչախումբս մէկ գիշեր անցկացնելով Հարաւսլավիայում, Ապրիլի 8-ին թռանք Մոսկուայ: Այստեղ արդէն կատարեալ խառնաշփոթ էր, իրարանցում, անտերութիւն: Երեւան թռչող օդանաւ չկայ: Մարդիկ, երբ օր շարունակ օդանաւի են սպասում: Վերջապէս յայտարարուեց Երեւան թռչող չուերթի թիւը: Բնական է՝ մերը չէր: Մէկ էլ տեսնեմ հայ օդաչուների խումբը գեղեցիկօճի սպասարկուհիներով շրջապատուած ուղղուում է դէպի օդանաւ: Անմիջապէս մի յանդուգն միտք առկայեց ուղեղումս: Մօտեցայ օդաչուների խմբին ու բացատրեցի իմ եւ խմբի վիճակի մասին, հասկացնել տալով, որ, եթէ ամէնաուշը վաղը կէսօրին Երեւանում չլինենք՝ վտանգի տակ կը դուրեն մեր ելոյթները Մայր Հայրենիքում:

- Իսկ մենք ի՞նչ կարող ենք անել ընկեր ջան, տեսնում էք թէ ինչ վիճակ է տիրում երկրում, շունը տիրոջը չի ճանաչում, սա էլ Գորբաչովեան վերակառուցման արդիւնքից է- ասաց հաւանաբար աւագ օդաչուն:

- Խնդրում եմ գոնէ տղայիս տարէք ձեզ հետ, Երեւանում մարդիկ կան, որոնք կարող են մեզ դուրս հանել այս անելանելի վիճակից:

- Ո՞ւր է տղադ, ասա թող մօտենայ:

- Արամ մօտ արի տղաս, դու

Շար.ը էջ 19



## DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

## LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com CALL FOR A FREE CONSULTATION 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801 626.386.8606



# Վանի 1915 Ապրիլեան Զերոսամարտի Մասին



Վասպուրականի Հայրենակցական միութիւնում ամէն տարի Վանի ապրիլեան հերոսամարտի լիշատակութիւնը կանոնադրային պարտաւորութիւն է:

Վասպուրականը այն վայրն է, ուր իրենց գործունէութեան դաշտ էին դարձրել հայ անհատ մտաւորականներն ու ասանդական կուսակցութիւնները, այնտեղ ոչ միայն խօսք ու գաղափար էր, այլեւ գործ, կռիւ, հերոսութիւն եւ յաղթութիւն:

Հերոսամարտերը իւրապատուկ իրողութիւններ են, բազմաստիճան դժուարութիւնների յաջորդական յաղթահարումներ, Վանի պարագայում՝ արդէն ընթացող եղեռնի, ռազմաքաղաքական, բարոյական-հոգեկան համատարած անկումային վիճակի, կործանող սպասումի թելադրութիւնների յաղթահարում, կենաց-մահի մարտակոչ, հոգեփրկութիւն եւ ժողովրդային յաղթութեան կերտում:

Անցած, աւելի քան 100 տարիների ընթացքում, մեր երեւելի մտաւորականներն ու ազգային գործիչները իւրովի, բանաւոր կամ գրաւոր ներկայացրել են Վանի հերոսամարտը:

Պատմութեան համար արձանագրուած են եւ դէպքերը, եւ հերոսական անձինք:

Բազմաթիւ անդրադարձներ կան նաեւ օտար աղբիւրներում:

Ամէն տարի մէջտեղ են գալիս նոր աղբիւրներ եւ աշխատութիւններ, հարստացնելով հերոսամարտի մասին եղած դիտարկումները, ընկալումներն ու գնահատանքը, իսկ ընտանիքներում պահուած են հերոսամարտին առնչուող ոչ միայն լիշողութիւններ, այլեւ մասունքներ:

Մօտ 25 տարի առաջ պատուաւոր մի վանեցի տեղեկացրեց, որ իրանահայ վանեցի մի ընտանիքում պահպանուած է հերոսամարտի ղեկավարների կողմից իբրեւ քարտէջ օգտագործուած այն սաւանը, որի վրայ գծուած է Վան քաղաքի յատակագիծը, ինքնապաշտպանութեան շրջաններն ու դիրքերը:

Վանի 1915 թ. ապրիլեան հերոսամարտը, Օսմանեան կայսրութիւնում նախապէս ծրագրուած եւ տարիներ տեւած հայոց ցեղասպանութեան ընթացքում, հայութեան դիմադրական գործողութիւնների շարքում առաջինն էր եւ, ցաւօք, միակ յաղթական աւարտ ունեցածը:

Վանի 1915 թ. ապրիլեան հերոսամարտը ցեղասպանութեան ժամանակաշրջանի լաւագէտ վաւերագրուած իրադարձութիւններից է:

Կարեւորելով հայ ժողովրդի պատմութիւնում Վանի հերոսամարտի տեղն ու դերը, Գարեգին Նժդեհը 1930 թ. Սոփիայում հրատարակել է հերոսամարտի մասնակից Օննիկ Մխիթարեանի կազմած յուշամատենը:

Նժդեհը բարձր է գնահատել Վանի հերոսամարտը եւ ժամանակակիցներին ու սերունդներին պատգամել է միշտ օրինակ վերցնել վանեցիների փորձառութիւնից:

«Եթէ կ'ուզէք բախտորոշ ծառայութիւն մատուցանել ձեր ազգին, անոր մէջ մշակեցէք իր ճակատագրի զգացումը, սորվեցնելով անոր, ամէն բանէ առաջ հաւատալ իր սեփական բազուկին, որը աւելի զօրաւոր է քան կարող են կարծել իր արտաքին թշնամիները:

«Վանը հաւատաց ու յաղթեց: Փառք իրեն»:

Օննիկ Մխիթարեանի յուշամատենը արժէքաւոր է նաեւ այն բանով, որ այնտեղ անհրաժեշտ ճշտումներ եւ լրացումներ է արել Հերոսամարտի ղեկավարներից Արամ Մանուկեանը:

1990 թ. Հերոսամարտի 75-րդ տարելիցի առթիւ Վասպուրականի Հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ Երեւանում, պատկառելի խմբագրակազմի ջանքերով, 30 հազար տպաքանակով հրատարակուեց «Վան-Վասպուրականի հերոսամարտը 75» ժողովածուն. Երեւան «Հայաստան» հրատարակչութիւն, 1990, 127 էջ, 16 թերթ նկար:

Հերոսամարտի մասին գրուել են նաեւ վէպեր, վիպակներ: Նշանաւոր են ականատեսներ Մերուն Թորգոմեանի «Անմար կրակներ», Գուրգէն Մահարու «Այրուած այգեստաններ» վէպերը, ուր գեղարուեստական գրականութեան հնարաւորութիւնները լաւագէտ օգտագործուած են վաւերական անձանց եւ հերոսամարտի իրողութիւնները հնարաւորինս ամբողջական եւ գունագեղ արտայայտելու համար:

Յեղասպանութիւնը սկսուելու խորհրդանշական օր է ընդունուած 1915 թ. Ապրիլի 24-ը՝ Ստամպուլում հայ մտաւորականների առաջին խմբի ձերբակալութեան օրը, չնայած դրանից դեռ շատ օրեր ու ամիսներ առաջ էին սկսուել թուրքական բանակում հայ զինուորականութեան, ինչպէս նաեւ առանձին վայրերում խաղաղ ազգաբնակչութեան կազմակերպուած զանգուածային սպանդը:

Հերոսամարտը սկսուել է Ապրիլի 7-ին՝ հին տոմարով Ապրիլի 20-ին, յաղթական աւարտ է ունեցել Մայիսի 4-ին՝ հին տոմարով Մայիսի 17-ին:

Դժուարութեամբ է սկսուել հերոսամարտը, բազում գոհեր ու անդառնալի կորուստներ են եղել, մինչեւ որ հասել է Ապրիլի 7-ի «Օրհնուած պահը», որի մասին վանեցիները գոչել է:

«Կե'ցցէ հրացանի այդ առաջին որոտը...»

Վանի հերոսամարտում հայոց մասին տեղեկութիւնները ստույգ են, ճշգրտօրէն արձանագրուել եւ հաշուառուել է ամէն մի փող գէնք ու փամփուշտ, ամէն մի անձ եւ իրադարձութիւն, հերոսական կամ այլ արարք:

Թուրք վարիչները գործում էին նենգ, անկաշկանդ եւ սանձարձակ:

Թուրքիայի պատերազմի մէջ մտնելուց յետոյ, մինչեւ հերոսամարտը, հայութիւնը միայն Վասպուրականի գաւառներում մի քանի տասնեակ հազար մարդկային կորուստ էր կրել:

Խաբէութեան գոհ դարձան դաշնակցական ճանաչուած եւ կարող գործիչներ Վուսնեանը եւ Իշխանը՝ ուղեկիցներով:

Ընկերների հետ պատահածից ազդուած Արամ Մանուկեանը որոշում է կիսել նրանց ճակատագիրը, սակայն վանեցի կառապանի «Ո՞ւր կերդա՞ս» յորդորը թէ հրամանը փոխում է դէպքերի ընթացքը...

Փորձեց հասկանալ, թէ վանեցիները ինչպէ՞ս ի վիճակի եղան անհնարին պայմաններում նման դիմադրութիւն կազմակերպել եւ հերոսամարտի յաղթական արդիւնք ապահովել:



Քաղաքական կազմակերպութիւնները, իրարից անկախաբար, գէնքի եւ զինամթերքի հայթայթման լուրջ աշխատանք էին տարել:

Քաղաքում արդէն կազմուել էր զինուորական բարձրագոյն մարմին, որի ղեկավար էր ընտրուել Արմենակ Եկարեանը՝ արմենական, անդամներ կազմում էին Բուլկարացի Գրիգորն ու Կայծակ Առաքելը, իսկ Հրանտ Գալիկեանը, Գաբրիէլ Սեմեճեանը, Արամ Մանուկեանը եւ Փանոս Թերլեմեզեանը մարմնի խորհրդականներ էին ընտրուել:

Հերոսամարտը սկսուելու ժամանակ պատկերը հետեւեալն է եղել.

«Կռուի առաջին ութօրեակին Այգեստանում հագիւ ունենայինք վեց հարիւրի չափ հրացանակիրներ եւ տասնոց ատրճանակաւորներ. գաւառից ճողոպրած հայութեան հետ հետգհետէ Այգեստան թափուեցին նաեւ զինուած ուժերի բեկորներ Թիմարի եւ Հայոց ձորի շրջաններից», տեղեկանում ենք Արմենակ Փոխարեանի գրութիւնից. «Վան-Վասպուրականի հերոսամարտը 75» Երեւան «Հայաստան» 1990, էջ 24:

Ապրիլի 30-ի միօրեայ ցուցակագրութեամբ արձանագրուած տեղեկութիւններով պատկերը արդէն

հետեւեալն է եղել. Այգեստանում ստեղծուած էր պաշտպանական հինգ շրջան՝ 72 տուն-դիրքերով եւ 1153 մարտիկներով:

Քաղաքամէջը ունէր պաշտպանական 4 շրջան՝ 23 տուն-դիրքերով եւ 310 մարտիկներով: Ընդ որում 1463 մարտիկներից 759-ը զինուած էին ատրճանակներով: Փամփուշտի ընդհանուր պաշարը 174 հազար էր: Այգեստանում ամէն հրագէնի բաժին էր ընկնում մօտ 100 փամփուշտ: Հերոսամարտը վկայեց վտանգի պահին կուսակցական շահերից ու պատկանելութիւնից վեր կանգնելու եւ համախմբուելու վան-վասպուրականցիների միահամուռ կեցուածքը, հերոսամարտի ազգային ծառայութիւնում իւրաքանչիւր անձի համապատասխան տեղը ճշտօրէն որոշելու ազգային-քաղաքական իմաստութիւնը՝ զինուոր, հրամանատար, ամէն օրուայ ընթացքում քանդուող դիրքերը զիջելու վերականգնող քարակոփ վարպետ թէ բանուոր, սննդեղէնի եւ զինամթերքի առկայ նուազագոյն միջոցներին խնայողաբար վերաբերուելը, այլազան մարտական, արհեստաւորական, գիտական, առողջապահական անձնական նախաձեռնութիւններին ընդառաջումը:

Վանեցիները կարողացել էին ամբողջացնել հետեւեալ կարեւոր պայմանները. -Բոլոր մակարդակներում պատշաճ հրամանատարութեան ներկայութիւն,

-դիրքերի խելամիտ դասաւորութիւն ու դրանց մշտական դեկավարման իրականացում,

-այլազան մարտական, զինամթերքի, սննդեղէնի անխափան մատակարարում,

-վիրաւորների եւ հիւանդների պատշաճ բուժում եւ խնամք,

-հերոսամարտի ամբողջ ժամանակ ժողովրդային մշտական կորով:

Մասնաւոր նախաձեռնութեան արդիւնքով են առաջացել պատերազմական վիճակի դէպքում անհրաժեշտ բազմաթիւ ենթակառուցուածքները:

Առանց դրանց հնարաւոր չէր լինելու հերոսամարտի յաղթանակը.

-գէնքերի վերանորոգման արհեստանոցը,

-հայ ռազմիկների համար օրական 40-50 գոյգ կօշիկ կարող կօշկակարների համախմբումը,

-հագուստներ կարող եւ գործող կանանց համախմբումը,

-զինամթերք արտադրող արհեստանոցի ստեղծումը՝ վառուղի արտադրութեան, զնդակների ձուլման, պարկուճների թողարկման եւ փամփուշտների լիցքաւորման բա-



# Վանի 1915 Ապրիլեան Զերոսամարտի Մասին

Շարունակուած էջ 14-էն

Ժաննունքներով:

–Բարձր դասարանցի մօտ հինգ տասնեակ պատանի հիմնում են քաղաքի ոստիկանական կամաւոր ծառայութիւնը՝ ներքին կարգուկանոնին հետեւելու, հնարաւոր չարաչառումները կանխելու, ինչպէս նաեւ անհարկի գոհերից խուսափելու համար քաղաքում կուտակումներ թոյլ չտալու նպատակով:

–Կին թէ տղամարդ, մանուկ եւ ծերունի լծուած էին ընդհանուր գործին:

–10-15 տարեկան թուով մօտ 50 պատանիներ հսկում էին թշնամու հրասանդ տեսակի արկերի ընկնելուն, անմիջապէս վազելով հասնում եւ արկը չպայթած պատրոցը կտրում էին: Այդպիսով նրանք փրկում էին շատերի կեանքը եւ կանխում էին շէնքերի ու դիրքերի փլուզումը, նաեւ վառող էին ապահովում փամփուշտ լիցքաւորող Այգեատանի եւ քաղաքամէջի երկու զինագործական արհեստանոցներին: Այդ վտանգաւոր առաքելութեան ընթացքում հերոսաբար զոհուած են 13-ամեայ Մարտիրոս Գիողոշեանը, 10-ամեայ Անդրանիկ Ատոմեանը, 12-ամեայ Յակոբ Հայդուդեանը, 11-ամեայ Շանոյեանը կամ ձանոյեանը եւ այլք:

–Յատկապէս պէտք է նշել թշնամու հրետանային բացարձակ գերազանցութիւնը գրեթէ զրոյացրած՝ քարակոփ վարպետների, պաշտպանական ամրութիւնների կառուցող եւ վերաշինող, խրամատներ, միջդիրքային հաղորդակցային ուղիներ փորող՝ ամրաշէն ջրկատների գործունէութեան մասին՝ մօտ 1000 կամաւորներով: Նրանք կռուողներին հուսասար: Եւ դեռ աւելի քաջութիւն էին դրսեւորում, երբեմն օրուայ ընթացքում մինչեւ 6 անգամ քանդուող նոյն դիրքը 6 անգամ նորոգելով: Մի անգամ, երբ առանձին գտնուող դիրքերից մէկը վիրաւորներով եւ առանց փամփուշտի պաշարի յայտնուեց վտանգաւոր կացութիւնում, ամրաշէն ջրկատը գետնուղի փորեց մինչեւ դիրք, 9 կռուողներին ու վիրաւորներին՝ նրանց թուով ապագայ յայտնի գրող-երգիծաբան Լեռ Կամսարին՝ դուրս բերեցին վտանգաւոր կացութիւնից:

Պուլկարացի Գրիգորը բնակչութիւնից հաւաքուած մետաղեայ իրերից, խոհանոցային կաթսաներից ու այլ պարագաներից երկու թնդանոթ է ձուլում:

Վառողի խնայողութեան նկատուածով հագուազէպ արձակուող արկերը թուրքերի հոգիներում կրուպի թնդանոթներից աւելի մահացու հոգեբանական աւեր էին գործում:

Այդ ամէնի հանրագումարը՝ բոլոր մակարդակներում պատշաճ հրամանատարութեան ներկայութիւնը, դիրքերի խելամիտ դասաւորութիւնն ու դրանց մշտական ղեկավարման իրականացումը, այլազան մարտական, զիւսթեթերի, անդեղէնի անխափան մատակարարման, վիրաւորների եւ հիւանդների պատշաճ բուժման եւ խնամքի ապահովութեան, անհրաժեշտ այլ ենթակառուցների գոյութիւնը, հերոսամարտի ամբողջ ժամանակի ժողովրդային մշտական կորովը՝ հանդիսացան այն երաշխիքը, որով Վանը արժանիօրէն դիմագրաւեց, իսկ յետոյ յաղթեց թուրքական պատերազմական մեքենային:



Հարց կարող է առաջանալ, եթէ հերոսամարտի տեւողութիւնը շարունակուէր, վանեցիները ի վիճակի կը լինէին դիմադրութիւնը շարունակել:

Այս հարցում եւս, վանեցիները դրական պատասխանը երաշխաւորել էին: Այդ ցուցուեց հետեւեալ իրողութեամբ. Հերոսամարտի յաղթական աւարտին՝ Քաղաքամէջում նախապէս եղած փամփուշտի սահմանափակ պաշարի կէսն էին օգտագործել:

Վերը թուարկուած իրողութիւնները ամբողջութիւնն էր այն հիմնական երաշխիքը, որով Վանը արժանիօրէն դիմագրաւեց, իսկ յետոյ յաղթեց թուրքական պատերազմական մեքենային:

Թուրքերի մարտական ուժերի մասին տարբեր աղբիւրներում տարբեր թուեր են բերուած: Մենք գերմանական զինուորական աղբիւրների տեղեկութիւններն աւելի ստոյգ ենք համարում:

Հերոսամարտի սկզբնական շրջանում, միայն Այգեատանում, «թուրքերը կեղրոնացրել էին 6 հազար կանոնաւոր զօրք, 12 լեռնային եւ ծանր թնդանոթ, բազմաթիւ քուրդ խուժան եւ թուրք բաշիբոզուկներ եւ անսպառ հրազէն ու փամփուշտ: Միայն Ապրիլի 7-ի գիշերը նրանք սպառեցին միլիոնաւոր փամփուշտ»: «Վան-Վասպուրականի հերոսամարտը 75» Երեւան «Հայաստան» 1990, էջ 29-30:

Հերոսամարտի միայն առաջին օրը թուրքերը թնդանոթներից Այգեատանի վրայ կրակել են 700 արկ:

Զինուորական բարձրագոյն մարմնի անդամ, տաղանդաւոր նկարիչ Փանոս Թերլեմեզեանը նաեւ հմուտ նշանաձիգ էր, նա քանիցս գլորելով թուրք հրետանաւորներին, թուրքական հրետանու որոշ ընդհատում էր պարտադրում:

Ըստ գերմանացի զինուորական մասնագէտների գնահատումների, Վանում հերոսամարտի մասնակիցների կողմից թուրքական պետական բանակի 13 հազարանոց սպանուած գերմանացի հրետանաւոր սպանների ու զինուորների նկատմամբ ցուցաբերուած դիմադրութիւնը, հաւասարազօր է եղել նման զինական ուժի նկատմամբ յաղթանակի հնարաւոր արդիւնքի հասնե-

լու համար անհրաժեշտ 50 հազարանոց կանոնաւոր բանակային զօրամիւտերումի մարտական ակտիւ գործողութեան:

Ուստի պէտք է վերատեսուելեան ենթարկուի նաեւ այն տեսակէտը, որ իբրեւ թէ, Վանի հերոսամարտի յաջողութիւնը պայմանաւորուած է եղել ուսական բանակի եւ հայ կամաւորների առաջխաղացքով:

Ընդհակառակը, Վանի հերոսամարտը ինքն է նպաստել ռազմաճակատում ուսական բանակի յաջողութեանը:

Պատկերացնում էք, ռազմաճակատի գծից ոչ հեռու գտնուող վայրում՝ Վանում, 50 հազարին համազօր հայկական ռազմական կարողութեան փաստը:

Մօտ մէկ ամսուայ ընթացքում, ռազմաճակատում թուրքերը ուսական զօրքերի ուղղութեամբ մօտ 15 հազար հրանօթային արկ պակաս են կրակել (միայն Այգեատանի վրայ թուրքերը սովորական օրերին 300 արկ են կրակել իսկ յարձակումների օրերին՝ 700 արկ):

Դէ հիմա ամէն ոք ինքը թող պարզի, ո՞վ է ում օգնել ու փրկել:

Եթէ յայտնի չլինէին, արձանագրուած չլինէին հերոսամարտի ժամանակ վանեցի մարտիկների թուի, զինուածութեան եւ զինամթերքի սահմանափակ լինելու մասին տեղեկութիւնները, ապա հիմնուելու էին գերմանացի ռազմագէտների առարկայական այն գնահատման վրայ, որ Վանի հերոսամարտի ժամանակ, վանեցիները թուրքական կանոնաւոր բանակի դէմ մարտերում ցուցաբերել են 50 հազար կանոնաւոր մարտական բանակի կարողութեան համազօր դիմադրութիւն, եւ այդպիսով յաղթել են թշնամուին:

Պէտք է ճիշտ հասկանալ Վանում 50 հազար հայկական զօրքի վերաբերեալ գերմանացի զինուորական մասնագէտների մատնանշած, ակնյայտ սխալ, թուի իմաստը:

Քանի որ Օսմանեան կայսրութիւնում հայոց ցեղասպանութեան իրագործումը ձեռնառու էր ուսական կայսրութեանը, համընկնում էր նրա հեռահար նպատակներին, ուստի ուսական կողմն ամէն ինչ արեց վանեցիներին եւ վասպուրականցիներին երկրից տեղահանելու, եւ նրանց յաջողուած փորձառութեան տարածում եւ կրկնութիւն թոյլ չտալու համար:

Եթէ Մուշում՝ ուր եւս զարգացած արհեստաւորութիւն կար՝ նոյնութեամբ ընդօրինակէին եւ կրկնէին վանեցիների փորձառութիւնը, ապա այնտեղ էլ կոտորի Հաջի Յակոբի եւ ընկերների մարտնչումը յաջողութեամբ կ'աւարտուէր:

Նոյն յաջողութիւնը կը պատահէր նաեւ այլ վայրերում...

Նոյնիսկ իր եզակիութեամբ՝ Վանի հերոսամարտը ժխտեց, անիմաստ դարձրեց հայոց հանդէպ երիտթուրքերի ծրագրած ու իրականացրած հայոց ցեղասպանութիւնը, որովհետեւ փրկուած վասպուրականցիներից 140 հազարը հաստատուեցին Արեւելեան Հայաստանում: Վանի վարժապետանոցը նոյնիսկ աւարտել չհասցրած անձինք Երեւանի համալսարանի հիմնադիր-դասխօսներ դարձան:

Հերոսամարտի ղեկավարներից Փանոս Թերլեմեզեանի անձնական նախաձեռնութեամբ եւ միջոցներով, հիմնադրուեց այժմ իր անունը կրող նկարչական ուսումնարա-

նը: Մեր բոլոր նկարիչներն ու քանդակագործները, գրեթէ առանց բացառութեան, այդ հաստատութեան ուսանածներն են: Փանոս Թերլեմեզեանի հիմնադրած ուսումնական հաստատութիւնից գաղութեցին եւ բազմաթիւ այլ մասնագիտական ուսումնական հաստատութիւններ առաջացան:

Բոլոր մակարդակներում՝ կրթութիւն, գիտութիւն, առողջապահութիւն, գիւղատնտեսութիւն, ճարտարապետութիւն, շինարարութիւն, թատրոն, գրականութիւն, երաժշտութիւն, երկրի ղեկավարում եւ այլն մնացած բոլոր բնագաւառներում Վասպուրականցի եւ ծագումով վասպուրականցի մտաւորականների գործուն, մեծաքանակ, որակեալ եւ առաջատար ներկայութիւնը միշտ եղել է:

Խորհրդային Հայաստանի մօտ 70-ամեայ տեւողութեան ընթացքում երկիրը մօտ 30 տարի ղեկավարել են վասպուրականցի Աղասի Խանջեանն ու Կարէն Դեմիրճեանը:

Այսօր այնտեղ միլիոնաւոր հայ անձինք վասպուրականցու արիւն են կրում...

Շնորհաւորում ենք Վանի հերոսամարտի 107-րդ տարեդարձը:

Վանի հերոսամարտը ոչ միայն վասպուրականցիների, այլեւ համայն Հայ ազգի պանծալի եւ անմոռանալի սխրանք է:

Վանի հերոսամարտն ԱՆՀՆԱՐԻՆ պայմաններում կերտուած ԱՆՀՆԱՐԻՆ յաղթանակ է Օսմանեան պետական բանակի նկատմամբ:

Վանի հերոսամարտն ԱՆՀՆԱՐԻՆ պայմաններում կերտուած ԱՆՀՆԱՐԻՆ յաղթանակ է, որովհետեւ Օսմանեան բանակը պատմականօրէն յատկանշուել է իբրեւ աշխարհի լաւապէս զինուած, փորձառու, զօրաւոր պետութիւնների բանակների դէմ յաջողութեամբ պատերազմած եւ բազում յաղթանակներ կերտած բանակ:

Վանի հերոսամարտն ԱՆՀՆԱՐԻՆ պայմաններում կերտուած ԱՆՀՆԱՐԻՆ յաղթանակ է, որովհետեւ այն կերտուեց Վասպուրականում եւ Հայկական բարձրավանդակում հայկական պետականութեան մօտ ութ հարիւրամեայ բացակայութեան պայմաններում:

Վանի հերոսամարտն ԱՆՀՆԱՐԻՆ պայմաններում մօտ մեկամսեայ ինքնապաշտպանութեամբ կերտուած ԱՆՀՆԱՐԻՆ յաղթանակ է, որովհետեւ այն կերտուեց կռուողների թուի, գէնք ու զինամթերքի սահմանափակութեան, առանց անդեղէնի եւ ընդհանրապէս որեւէ տեսակի մատակարարման, դիրքային առաւելութեան չգոյութեան...

Առանց Վանի հերոսամարտի ԱՆՀՆԱՐԻՆ էին լինելու 1918 թուականի մայիսեան յաղթանակներն ու ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ կերտումը, գիտութեան, կրթութեան, արդիւնաբերութեան ու գիւղատնտեսութեան բացառիկ նուաճումները, մայիսեան յետագայ փառապանծ յաղթանակները:

Յաւերժ փառք Վանի հերոսամարտը կերտած հայրդիւններին:

Յաւերժ փառք յանուն ազգի եւ հայրենիքի նահատակուած բոլոր հայրդիւններին:

Կեցցէ Հայաստանը, կեցցէ Հայ ազգը:

**ՅԱԿՈԲ ՍԿՐՏՉԵԱՆ,**  
Վասպուրականի հայրենակցական միութեան Լոս Անջելոսի մասնաճիւղի ատենապետս



# Տ.Տ. Գեորգ Զ. Չորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Անդրանիկ Կոնդակ - Հոգեւոր Ծննդաբան

ԴՈՎՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Ազգընտիր Տեղակալ Մայր Աթոռ

Ներկայ տարին երախտագիտութեամբ պիտի նշէ Երջանկայիշատակ Տ.Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 150-ամեակը: Իր ընտրութենէն առաջ, Գեորգ Արքեպիսկոպոս Չորեքճեան եղաւ իր ժամանակին ճիշդ անձը որ փրկեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իսկական անկումէ: Իր նախորդին՝ նահատակ Տ.Տ. Խորէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1938-ի ոճրապարտ վախճանումէն ետք, Չորեքճեան Արքեպիսկոպոս եօթ տարիներ Մայր Աթոռոյ Տեղակալութիւնը վարեց (1938-1945) մեծ ձեռնհասութեամբ հակառակ իր յառաջացեալ տարիքին եւ քաղաքական անթոյլատրելի պայմաններուն, երբ անկարելի էր կատարելու Կաթողիկոսական Ընտրութիւնը: Ծնած էր Նոր Նախիջեան 1863 թուին եւ աւարտած էջմիածնի Գեորգեան ձեմարանի ընթացքը, դառնալով անոր առաջին սաներէն մին:

Թէեւ 1941 Ապրիլ 10-ին Ազգային-եկեղեցական Ժողով գումարելու իր ճիգը արդիւնաւոր եղաւ, սակայն Ժողովը, նախագահութեամբ Կիրիլեան Աթոռի Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեանի, չկարողացաւ կաթողիկոսական ընտրութիւն կատարել, ու գալիս յետաձգեց Ժողովական պատգամաւորներու եւ եպիսկոպոսներու անբաւարար ներկայութեան հետեւանքով: Նոյն Ժողովը բաւականացաւ Ազգընտիր Տեղակալ ընտրել Տ. Գեորգ Արքեպիսկոպոս Չորեքճեանը:

Միջադէպ մը կը կարգայի ուր Տեղակալ Սրբազանը եւս հալածուելով չէր կրնար մնալ Մայր Աթոռէն ներս, նախորդ Հայրապետի դէմ կատարուած ոճիրէն անմիջապէս ետք: Վրաստանի թեմին Առաջնորդն էր Գեորգ Արքեպիսկոպոս եւ սակայն զինք եւս կը փնտռէին բանտ առաջնորդելու համար: Գիշերով Տեղապահ Սրբազանը բանաստեղծ Աւետիք Իսահակեանի Երեւանի տան դուռը կը բախէր որպէս ապաստան: Իսահակեան իսկոյն ներս կ'առնէր Տեղապահ արքեպիսկոպոսը եւ ներքնայարկ կ'առաջնորդէր զինք, զիշերը անցընելու եւ մի քանի օր իր եւ Տիկին Իսահակեանի հիւրը մնալու մինչեւ ապահով վերադարձը էջմիածին: Միջադէպը կը պատահէր 1941-ի Ազգային-եկեղեցական Ժողովէն երկու տարի առաջ:

## Ազգային-եկեղեցական Ժողով (1945)

Տեղակալ Սրբազանը անկարելի կարելի դարձուց եւ անձամբ բռնակալ մարաշախտ Ստալինի մօտ երթալով Քրեմլինի մէջ իր խնդրանքները մատուցեց եւ գրեթէ բոլորին գրական արդիւնքները ստացած վերադարձաւ Մայր Աթոռ: Անոնց կարգին ամենակարեւոր երեքը՝ Ազգային-եկեղեցական Ժողովի գումարումը, Կաթողիկոսական ընտրութիւնը, եւ Հոգեւոր ձեմարանի վերաբացումը: Տեղակալ Սրբազանը իսկոյն յաջողեցաւ 1945 թուին գումարել Ազգային-եկեղեցական Ժողովը՝ նախագահութեամբ Տանն Կիրիլիոյ Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին:



Համազգային Ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ազգընտիր Տեղակալը որ օժուած ստանալով Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսէն եւ ներկայ եօթ եպիսկոպոսներէն ստացաւ Նորին Ս Օծութիւն Տ.Տ. Գեորգ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ անունը: Հայրապետը իսկոյն սկսաւ հրատարակել նաեւ «էջմիածին» պաշտօնական ամսագիրը:

## Անդրանիկ Կոնդակ

Նորին Սրբութիւն Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր անդրանիկ Կոնդակը գրեց 1946-ի Ապրիլ 1 թուակիր՝ ուղղեալ Մեծի Տանն Կիրիլիոյ Գարեգին Ա. Կաթողիկոսին, Երուսաղէմի Տ. Կիրեղ Բ. Պատրիարքին, եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան տեղապահ Գեորգ Արքեպիսկոպոս Արսլանեանին, թեմական եպիսկոպոսներուն եւ համայն հայութեան: Ուրախութեամբ կ'աւետէր Ազգային-եկեղեցական Ժողովին գումարումը՝ նախագահութեամբ Տ.Տ. Գարեգին Ա. Մեծի Տանն Կիրիլիոյ Կաթողիկոսին եւ 111 պատգամաւորներու: Բաշխելով իր օրհնութիւնը, նորընտիր Հայրապետը իր հայրական յորդորը կ'ուղղէր «ի գօրացուցանել զեղբայրական սէր առ միմեանս, առ եկեղեցին եւ առ Մայր Աթոռ նորա»:

Ակնարկելով Ամերիկահայ թեմի երկպառակեալ վիճակին, կ'ըսէր թէ «ցաւ է մեզ եւ համայն ողջամիտ հայոց» տեսնել զայն, որուն Հայրապետը անմիջական լուծում մը չէր կրնար տալ, միայն պատուիրելով անջատեալ հատուածին «որք չեն հաստատեալ Հայրապետական իշխանութեամբ» միանալու Մայր Եկեղեցոյ թեմին, ենթակայ մնալով ըստ վարչականին Առաջնորդին Տէր Տիրան Ներսոյեան նորապսակ եպիսկոպոսին»: Կաթողիկոսը կը յիշեցնէր ամերիկահայ Ժողովուրդին թէ «որպիսի չարեաց աղբերք են այդպիսի երկպառակութիւնք ընդ հարկաւ եկեղեցոյ»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի իր կոչումին անդադառնալով «ակնկալութիւնները խորապէս յուզում են սիրտ Մեր եւ ճնշում հոգիս, ծանր պարտականութեանց եւ ծանր հոգեւոր համար»: Իր մտահոգութիւնը կը յայտնէր նաեւ ներքին եւ արտասահմանի թեմերու կազմակերպութեան մասին, ուր «հայեր չձուլուին եւ չանհանան», իր ջերմ իղձը յայտնելով տեսնելու աշխարհացրիւ հայութիւնը համայնութեամբ հայրենի երկրին մէջ, «որ աչքս խաղաղ գոցեմ, եւ հոգուս ու մարմնիս հանգիստ տամ եւ հայ

Ժողովուրդի ողորմիւր լսեմ»:

Իր սրտագին կոչը ուղղելով նաեւ Տանն Կիրիլիոյ Գարեգին Ա. Հայրապետին, «հոգիս հրճուած է տեսնելով Հայ Եկեղեցու Աթոռների համերաշխութիւնը Մայր Աթոռի նկատմամբ», ցաւ յայտնելով միանգամայն որ «Աթոռը գրկուած է իր պատմական վայրից»: Այդուհանդերձ, միւլթարուած կը զգար որ «այդ տարագիր եւ աստանդական Աթոռը այսօր դառնում է կայուն եւ հաստատուն»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուրախութիւնը մեծ էր քանի որ Կիրիլիոյ Աթոռին բազմած էր «Մեր հոգեկից հարազատ եղբայրը՝ շնորհազարդ Գարեգին Կաթողիկոս, մեզ հետ միասին սնուած ու դաստիարակուած Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանում»: Միւս կողմէ իր մտահոգութիւնը կը յայտնէր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան մասին թէ «եկեղեցոյդ փառաւոր եւ հօտիդ բարգաւաճ» վիճակի փոխարէն տեսնելով անմիւլթար եւ փոքրացած պատրիարքութիւնն ու անոր ենթակայ թեմերը:

Հայրապետը աւելի կը վշտանար «փոքրաթիւ հօտիդ մէջ գոյութիւն ունեցող իրարամերժ տրամադրութիւններուն» պատճառաւ, որոնց հետեւանքով «պառակտուած է մեր սիրելի հօտը», ակնարկելով Մեսրոպ Պատրիարք Նարոյեանի վախճանումէն ետք (1944) անտեղի յետաձգումներով ստեղծուած վիճակին, ուր հոգեւորականներու մեծ թիւ մը կը հակառակէին Տեղապահ Գեորգ Արսլանեան Սրբազանին, զինք մեղադրելով եւ դիմադրութեամբ հակառակելով մինչեւ իսկ պատրիարքարանի շէնքը ձեռք առնել փորձելով ու անկանոն տեղապահի մը ընտրութիւն մըն ալ կատարելով: Այլ առիթով մը մանրամասնութեամբ գրած ենք այդ մասին, երբ Մայր Աթոռէն Գեորգ Զ. Վեհափառ Հայրապետը հարկադրուած կ'ըլլար կարգադրած հոգեկից մի քանի խոռվարար եկեղեցականներ, եւ դիմելով թուրքիոյ Նախագահ ձեւալ Պայտրին կ'արգիլէր Հայ Եկեղեցոյ կանոնին հակառակ շարժումներ քաջալերել: Հայրապետին ազդու միջամտութիւնը կը յաջողէր պատրիարքի ընտրութիւն կատարել տալ օրինաւորապէս եւ Գարեգին Խաչատուրեան արքեպիսկոպոսը բազմեցնել Կ. Պոլսոյ Աթոռին:

Նորընտիր Հայրապետը կոչ կ'ուղղէր «ազգային բարերարներուն մեր ազգի պատմիկ բարձրացման օգնելու» հոգածու ըլլալով Մայր Աթոռին եւ Հոգեւոր ձեմարանին, տպարանին, մատենադարանին եւ թանգարանին, եւ առաւել չափով օգնել նիւթապէս վերականգնելու համար հայրենիքը, հնադարեան պատմական յուշարձանները, եւ «հայ Ժողովուրդի Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածինը»: Կոնդակի աւարտին Վեհափառ Տ.Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս արտասովոր կերպով յատկանշական իր խօսքը կ'ուղղէր «տիկիններուն եւ օրինորդներուն որոնք աստուածային շնորհաց արժանացած են եւ սիրոյ ու մարդասիրութեան քաղցր ու քնքուշ զգացումներով օժտուել են»:

## Հոգեւոր Ծննդաբան

Էջմիածնի Գեորգեան ձեմարանը փակուած էր 1917 թուին, եւ Խորհրդային իշխանութեան բիրտ ուժին ներքեւ փակ կը մնար մինչեւ

1944, երբ քաջակորով Տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոս Քրեմլինի մէջ Ստալինի հետ ունեցած անկարելի նկատուած տեսակցութեան որպէս արդիւնք, արտօնութիւն ձեռք ձգած էր վերաբանալու Մայր Աթոռի Հոգեւոր ձեմարանը, առանց օգտագործել կարենալու Գեորգեան ձեմարանի իսկական շէնքը գորդաւեր էին պետական նախարարութարանի համար: Նորաբաց դպրանոցը կոչուեցաւ Հոգեւոր ձեմարան որ 1944 թուականէն սկսեալ բաց եւ գործօն մնաց մայրավանքի մատենադարանի շէնքին մէջ: Յետագային իր բնօրրանին մէջ արդիւնաւորելով այսօր Գեորգեան ձեմարան-Համալսարանը իր փառքի օրերը կ'ապրի:

ձեմարանի բացումին վեցամեայ ուսումնական ծրագիր մը մշակուեցաւ երիտասարդ հոգեւորականներու պատրաստութեան համար, երբ հին սերունդի հոգեւորականներ փաստօրէն չկային, եւ Տեղակալ Սրբազանը հարկադրուած էր ձեմարանի նախկին աւարտական կամ թերաւարտ անձերէն վեց հոգի ձեռնադրել եւ միաբաններու թիւը 11-ի հասցնել: Երբ Գեորգ Հայրապետ գահակալեց իր առաջնահերթ եւ հրատապ հարցերէն մին ձեմարանի բարուք մատակարարումը նկատեց իր ըզձանքին ընթացք տալով, թէ «պիտի կարողանա՞ր արդեօք նորաբաց Հոգեւոր ձեմարանը իր բարձրութեան հասցնել՝ մատակարարելով Հայ Եկեղեցուն արժանաւոր հովիւներ»: Հայրապետը ինքնավստահ եւ գոհունակ սրտով յայտնած էր թէ «հարցը լուծուած էր հիմնական կերպով եւ օրինական եղանակով, եւ Ս. Էջմիածնին իրաւունք էր տրուած Հոգեւոր ձեմարան ունենալ՝ օգտագործելով նախկին մատենադարանը»:

## Ուսումնական Ծրագիր եւ Ուսանողութիւն

Գեորգ Զ. Հայրապետ աշխատեցաւ ձեմարանը օժտել որակաւոր դասախօսներով, անհրաժեշտ գրեական պիտոյքներով եւ առողջապահական յարմարութիւններով: Հոգեւոր ձեմարանին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1945 Նոյեմբեր 1-ին: Ուսման ծրագրին մէջ քիչ տեղ տրուեցաւ կրօնագիտութեան, եւ լայն բաժին՝ հայագիտութեան, որ մասամբ կը համապատասխանէր «մեր կրօնական միւս բարձրագոյն ընծայարանների ծրագրին»: Լեզուներու կարգին պիտի տրուէր գրաբար, ռուսերէն եւ անգլերէն:


1948-ի տուեալներով, ձեմարանը ունէր 35 ուսանողներ եւ 10 դասախօսներ, հինգը հոգեւորականներ: Իսկ 1952-ին Ընծայարանը կը հաշուէր 11 շրջանաւարտներ եւ 6 դասախօսներ չորս հոգեւորականներով: Տարի մը ետք արդէն 8 շրջանաւարտներ սարկաւազ ձեռնադրուեցան, եւ 11 հոգիով միատեղ Կաթողիկոսին կարգադրութեամբ Մոսկուա մեկնեցան Չակոբյանի աստուածաբանական ձեմարան բարձրագոյն ուսում ստանալու:

## Գերեմիկ Եպիսկոպոս Դասախօս Ծննդաբան

1953 թուականին Տ.Տ. Գեորգ Ամենայն Հայոց Կաթողիկոս հրա-



### Հայաստանի Նախագահը Հանդիպեցաւ Զուլիգերիոյ Հայ Համայնքի Ներկայացուցիչներուն Հետ



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը Զուլիգերիա կատարած աշխատանքային այցելութեան ծիրէն ներս հանդիպում մը ունեցաւ զուլիգերահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Այս մասին յայտնեցին Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութեան:

Հանրապետութեան նախագահը անդրադարձաւ Հայաստանի, Արցախի անվտանգային հարցերուն, զարգացման հեռանկարներուն եւ սփիւռքի ներուժի լիարժէք իրացման կարելիութիւններուն:

Վահագն Խաչատուրեանը պատասխանեց նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներու տուած հարցումներուն:

### Սուրբ Քաթարթ Եկեղեցւոյ Սէջ Հնչեցին Ալեքսանդր Յարութիւնեանի Ստեղծագործութիւնները



Հովանաւորութեամբ Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան՝ Մայիս 21-ին, Սուրբ Քաթարթ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հայ անուանի երգահան Ալեքսանդր Յարութիւնեանի նուիրուած համերգ մը, որ կազմակերպուած էր «Քլինկէն» երգչախումբին եւ մշակութային միութեան կողմէ:

Ողջունի խօսքին մէջ Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի դեսպան Վարուժան Ներսիսեանը ընդգծեց մշակութային դերը՝ որպէս Հայաստանի եւ Միացեալ Թագաւորութեան ժողովուրդներուն միջեւ կապող կամուրջ:

Դեսպանը նաեւ նշեց, որ այս

տարի Հայաստանի Հանրապետութիւնն ու Միացեալ Թագաւորութիւնը կը նշեն դիւանագիտական յարաբերութեանց հաստատման 30-ամեակը, ինչ որ Միացեալ Թագաւորութեան առիթ կ'ընձեռնէ իր ժողովուրդին ներկայացնելու Հայաստանի հարուստ մշակութային ժառանգութիւնը:

Համերգին ընթացքին «Քլինկէն» երգչախումբի եւ «Քլինկէն» կամերային նուագախումբի (գեղարուեստական ղեկավար եւ իմբատար Սիփան Օլաւ), ինչպէս նաեւ շարք մը միջազգային ճանաչում ունեցող հայ եւ օտարերկրացի երաժիշտներու կատարմամբ հնչեցին Ալեքսանդր Յարութիւնեանի ստեղծագործութիւնները:

### Հայկական Գինիին Առանձնայատկութիւնը Կու Գայ Հայաստանի Սէջ Այդ Մշակոյթի Դարաւոր Առկայութեան:

Աթենքի Սէջ Ներկայացուեցան Հայկական Խմիչքները



Յունաստանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան եւ «Quality Wines» հայկական խմիչքներու եւ զովացուցիչ ըմպելիքներու ներկրող ընկերութեան կազմակերպութեամբ՝ Մայիս 18-ին Աթենքի «Մարիոթ» հիւրանոցային համալիրին ներս տեղի ունեցաւ հայկական խմիչքներու ներկայացման եւ համտեսման երեկոյ՝ ներառելով հայկական գինիի, քոնիակի, գարեջուրի եւ զովացուցիչ ըմպելիքներու լայն տեսականի:

Միջոցառման բացման խօսքը կատարեց Յունաստանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Տիգրան Մկրտչեանը:

«Մեր օրերուն գինեգործութիւնը վերածնունդ կ'ապրի Հայաստանի մէջ: Հայկական գինիին առանձնայատկութիւնը կու գայ Հայաստանի մէջ այդ մշակոյթի դարաւոր առկայութեան, բայց նաեւ այն հանգամանքի առկայութեան, զոր ֆրանսացիները կ'անուա-

նեն terroir, այսինքն՝ բնական միջավայրի գործօնով:

Բացի այդ, կարեւոր նշանակութիւն ունի սփիւռքահայ ներկայացուցիչներու աշխոյժ մասնակցութիւնը Հայաստանի մէջ գինեգործութեան զարգացման գործին մէջ, ներառեալ Հայաստանի մէջ միջազգային փորձի ներդրմամբ: Հպարտութեամբ կրնամ արձանագրել, որ աշխարհի լաւագոյն գինեգործութեան վերաբերեալ ամսագիրները լի են մեր օրերուն հայկական գինիին մատուցած բարձր որակի իրական գնահատմամբ ըսաւ Տիգրան Մկրտչեանը:

Այնուհետեւ, դեսպան Մկրտչեանը պատմական ակնարկ մը կատարեց հայկական հուշակաւոր քոնիակի պատմութեան՝ ընդգծելով անոր միջազգային մեծ վարկանիշը եւ արձանագրած յաջողութիւնները:

Երեկոն ընթացաւ ճաշ երաժշտութեան ընկերակցութեամբ՝ յունահայ երգչուհի Նելի Յուքարայի կատարումներով:

### ԱՊԱՏԵՂԵԿԱՏԻՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Սոցիալականի Մայիսի 19-ին մի շարք ԶԼՄ-ները կողմից շրջանառութեան մէջ են դրուել Հիմնադրամի նախկին աշխատակից Աննա Մանուկեանի կողմից իր ֆէյսպուքեան էջում տեղադրուած գրառումը՝ «Հայաստան» հիմնադրամի աշխատակցին հեռացրել են «Դիմադրութեան» շարժմանն աջակցելու պատճառով» վերնագրով, ինչպէս նաեւ նոյն օրը Ֆրանսայի հրապարակում անցկացուած հանրահասարակ ժամանակ նրա կողմից հնչեցրած նոյնաբովանդակ ելոյթը:

Իրականում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախկին աշխատակից Աննա Մանուկեանի հետ աշխատանքային պայմանագիրը լուծուել է աշխատանքային կարգապահութիւնը պարբերաբար խախտելու համար՝ խստօրէն պահպանելով ՀՀ Աշխատանքային օրէնսգրքի պահանջները:

Յիշեցնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը համազգային նշանակութեան ապաքաղաքական կառույց է եւ Հիմնադրամի հեղինակութիւնն ու բարի համբաւն արատաւորող ապատեղեկատուութեան տարածումը, Հիմնադրամի գործունէութեան քաղաքականացման փորձերն անընդունելի են եւ կարող են վնասել Հիմնադրամի գործունէութեան արդիւնաւետութեանը:



**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՍԷՋ (200 ԵՌԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



### «Միլան»՝ Իտալիայի Ախոյեան



«Միլանը» 11 տարի սպասել է ետք դարձեալ նուաճեց Իտալիոյ ախոյեանի տիտղոսը: Վերջին հանգրուանին Իտալացի Ստեֆանոյ Պրոլի գլխավորած խումբը վստահ չաղթանակ արձանագրեց «Սասուոլոյի» նկատմամբ եւ վաստակեցաւ 86 կէտ:

«Միլանը» 19-րդ անգամ նուաճեց Իտալիոյ ախոյեանի տիտղոսը: Անցած տարուայ ախոյեան Միլանի «Ինթերը» ետ մնաց 2 կէտով եւ գրաւեց երկրորդ տեղը: Իտալացի Սիմոնէ Ինձագիլի գլխավորած խումբը վերջին հանգրուանին ընդունեց «Սամպօրիային» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով: Դուբլ ձեւակերպեց արժենթինացի կիսապաշտպան Խոակին Կոռչան: Կոլ խփեց նաեւ խորուսթ կիսապաշտպան Իւան Պերիչիչը:

Մրցանշակիրն է Թուրինի «Եուվենթուսը» 36 ախոյեանական տիտղոսով:

### «Մանչեսթըր Սիթի» Յաջորդական Երկրորդ Տարին Նուաճեց Անգլիոյ Ախոյեանութիւնը



«Մանչեսթըր Սիթին» յաջորդական երկրորդ տարին ըլլալով նուաճեց Անգլիոյ Ախոյեանութիւնը: Վերջին հանգրուանին խաղալով «Ասթոն Վիլայի» դէմ «Սիթի» սեփական դաշտին վրայ չաղթանակ արձանագրեց 3:2 արդիւնքով:

«Ասթոն Վիլայի» առջեւ էր 2:0 արդիւնքով՝ մինչեւ 69-րդ վայրկեանը, սակայն «Մանչեսթըր Սիթին» կարողացաւ վերջին 20 վայրկեաններուն երեք կոլ նշանակելով մէկ կէտի առաւելութեամբ տիրանալ ախոյեանութեան:

«Լիւսերպոլ» 3:1 արդիւնքով չաղթեց «Ուլուերհեմփթընին» 1 կէտի տարբերութեամբ՝ դարձաւ փոխ-ախոյեան:

Երրորդ տեղը գրաւեց «Չելսին», իսկ «Թոտթենհեմ» դասուեցաւ չորրորդ, «Արսենըլ» հինգերորդ:

«Մանչեսթըր Եուսթոնթըր» վերջին հանգրուանին 0:1 արդիւնքով պարտուեցաւ Լոնտոնի «Քրիսթըլ Փելասին», սակայն մնաց 6-րդ տեղը:

«Պըրնիլին», «Ուոլթֆորտը» եւ «Նորուիչ Սիթին» դուրս մնացին ֆրեմիեր Լիգայէն:

### «ՌԲ Լայպցիկ» Առաջին Անգամ Նուաճեց Գերմանիոյ Գաւաթը

«ՌԲ Լայպցիկ» խումբը առաջին անգամ հռչակուեցաւ Գերմանիոյ գաւաթակիր: Պեուլինի «Օլիմպիա-շտադիոնում» տեղի ունեցած եզրափակիչ խաղին գերմանացի Դոմենիկոյ Տեդեսկոյի գլխավորած խումբը յետխաղային 11 մեթրանոցներով պարտութեան մատնեց «Ֆրայբուրկին» 4:2:



«ՌԲ Լայպցիկ» Գերմանիոյ Սուպերգաւաթի խաղին կը մրցի Պոլստեպլիկայի ախոյեան Միլանիի «Պայըրնին» հետ:

### Եւրոպայի Բռնցքամարտի Առաջնութեան Բացումը՝ Հայկական Եսթիզներով



Երեւանի Կարէն Դէմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ կայացաւ բռնցքամարտի Եւրոպայի տղամարդկանց առաջնութեան բացման պաշտօնական արարողութիւնը:

Բացման արարողութիւնը սկսաւ Եւրոպայի առաջնութեան պատմական ակնարկով՝ վերջիշէլով նախորդ առաջնութիւնները հիւրընկալած երկիրները: Այնուհետեւ մեկնարկեց առաջնութեան մասնակցող երկիրներու ներկայացման արարողութիւնը: Հայաստանի դրօշակակիրը բացման արարողութեանը նարեկ Մանասեանն էր:

Բռնցքամարտի Եւրոպայի տղամարդկանց առաջնութեան բացման արարողութիւնը պաշտօնապէս բացաւ ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեոսեանը, որ իր խօսքին մէջ յաջող եւ արդար պայքար մաղթեց բոլոր մասնակիցներուն:

Պաշտօնական արարողութեանը յաջորդեց մշակութային մասը, որ լեցուն էր հայկական էսքիզներով:

Բռնցքամարտի Եւրոպայի առաջնութիւնը կը կայանայ Մայիսի 22-30-ը:

### Կ'իլիան Մփապէն Նոր Պայմանագիր Կը Կնքէ ՊՍԺ-ի Հետ



Աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի 23-ամեայ չարձակող Կ'իլիան Մփապէն նոր պայմանագիր կը կնքէ Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի հետ: Ըստ շարք մը լրատուամիջոցնեպրու:

Պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2025-ի Յունիսը:

Մփապէն Արքայական ակումբի նախագահ Ֆլորենտինոյ Պերեսին արդէն յայտնած է, որ ընդունած է փարիզեան ակումբի առաջարկը եւ չի տեղափոխուիր Մատրիտի «Ռէալ»:

Աւելի վաղ Eurosport-ը յայտնած էր, որ Մփապէն կը ստանայ տարեկան 100 միլիոն եւրոյ, իսկ ՊՍԺ-էն չհեռանալու համար՝ 300 միլիոն եւրոյ յաւելեալ:

ՊՍԺ-ն Մփապէին առաջարկած է նաեւ դառնալ ակումբի համասեփականատէր եւ ձայնի իրաւունք ունենալ խումբի գլխավոր մարզիչի փոփոխութեան ժամանակ եւ ակումբի խաղացողներու քաղաքականութեան մէջ:

Աւարտուող մրցաշրջանին Մփապէն ՊՍԺ-ի հետ մասնակցած է 45 հանդիպման, նշանակած է 36 կոլ, կատարած է 26 կոլային փոխանցում:

### «Ռոման» Յաղթեց Վերջին Հանգրուանին Եւ Ապահովեց Եւրոպայի Լիգայի Ուղեգիր

Իտալիոյ առաջնութեան վերջին հանգրուանի «Ռոման» Թուրինի մէջ հիւրընկալուեցաւ «Թորինոյէն»։ Փորթուկալացի ժոզէ Մուրիլիոյի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

«Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը դեռ չէ վերականգնուած վնասուածքէն յետոյ: Անոր վերադարձը կը սպասուի Կոնֆերենցիաներու Լիգայի եզրափակիչին:

«Ռոման» 63 կէտով բարձրացաւ 5-րդ տեղ եւ ապահովեց Եւրոպայի Լիգայի խմբային փուլի ուղեգիր:



ՄԱՐԱԶԴ



ՆԱԶԱՐ ՍԱՂՊԱԶԱՐԵԱՆ

(Ծննդի Մարտ 17, 1926, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր եւ հարազատին՝ Նազար Սաղպազարեանի մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Մայիս 14, 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը եւ թաղումը պիտի կատարուի Ուրբաթ, Յունիս 10, 2022 ժամը 11:30ին Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Արսինէ եւ Սէրայտարեան եւ զաւակը Հրակ

Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի (Սաղպազարեան) Արմանի եւ դուստրերը Սապին եւ Սարին

Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սագօ եւ Սալբի (Եալընգատեան) Մայքըլը եւ դուստրը՝ Արիանա

Եղբօր կինը՝ Մատլէն Սաղպազարեան

Եղբօր զաւակը՝ Տէր եւ Տիկ. Ժագ եւ Դալար Սաղպազարեան Հարազատները

Մարի Որբերեան եւ զաւակները՝ Անի, Սօսի, Զարեհ եւ Մայքըլ իրենց ընտանիքներով

Տէր եւ Տիկ. Կարօ եւ Մարի Անդրիգաճեան եւ զաւակները Ժագ եւ Լարա իրենց ընտանիքներով

Տէր եւ Տիկ. Ժան Հայկ եւ Ֆրանսուազ Որբերեան եւ զաւակները Հուրի եւ Թամար իրենց ընտանիքներով

Անի Որբերեան եւ զաւակը Վաչէ եւ ընտանիք

եւ համայն Սաղպազարեան, Աջապահեան, Էթոյեան, Սաթմեան, Վարչապետեան, Որբերեան, Պէրպէրեան, Զագմաքճեան, Աւագեան, Մածունեան, Խաչերեան ընտանիքներ, հարազատներն ու բարեկամները:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: Address: City: State: Zip Code: Country: Tel: Email:

S.S. Գէորգ Զ. Չորեքճեան

Շարունակուած էջ 16-էն

Էջը ուղղեց Անթիլիասի Կիլիկեան Աթոռի դպրեմկանքի տեսուչ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեանին Մայր Աթոռ մեկնել եւ «որոշ դասընթացք աւանդել Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան մասին»: Դերենիկ Սրբազան իր առաջին դասախօսութիւնը տուած է «Աստուածաբանութեան նշանակութիւնը եւ կարեւորութիւնը» նիւթին շուրջ, որուն ներկայ եղած են Վեհափառ Հայրապետն ու Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամները:

Յաջորդաբար շաբաթը հինգ օր հիւր դասախօս Սրբազանը շարունակած է իր դասընթացքը հետեւեալ ինը նիւթերը աւանդելով: Աստուածաբանութեան ընդհանուր սահմանումը, Յայտնութիւն, Արարչագործութիւն, Քրիստոսի Անձին Վարդապետութիւնը, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը,

Փրկագործութեան խորհուրդը, Քրիստոնեայ Եկեղեցին, Հայաստանեայց Եկեղեցին, Խորհուրդները:

Նոյն տարեշրջանին Հոգեւոր ձեմարանը ունէր 30 ուսանողներ՝ տեսչութեանը ներքեւ Մարտիրոս Մինասեանի, որ Վեհափառ Հայրապետի ցուցմունքներով անհրաժեշտ նկատած էր Դերենիկ Եպիսկոպոսի այցելու դասախօսի կարգադրութիւնը, որովհետեւ ձեմարանի ծրագրին մէջ «տկար էին կրօնական եւ աստուածաբանական գիտութիւնները, իսկ զօրաւորը՝ հայափոխական ուսումները»: Դերենիկ Եպիսկոպոս ամիս մը դասաւանդելէ ետք, վերջին դասախօսութիւնը աւանդած է «Հոգեպաշտութեան անհուն արժէքը եւ անոր կարեւորութիւնը մարդկային կեանքին մէջ» նիւթին շուրջ, ինչպէս ինք ըսեր էր իր Անթիլիաս վերադարձին:

Աւագ Ընկերոջս Յիշատակին

Շարունակուած էջ 11-էն

մենակը գնում ես ու անմիջապէս կապուած Արտաշէսի հետ եւ նրան բացատրում մեր վիճակի մասին, նա կը կարողանայ օգնել մեզ:

- Մենք կ'օգնենք ձեզ: Դէ՛, տղայ ջան, հետեւիր մեզ,- ասաց օղաչուն:

Արամի մեկնելուց յետոյ, կուռով-շառով կարողացայ մի սրահ ապահովել իմ բիս համար ու ամբողջ գիշեր, բոլորս միասին առանց քնելու, ուտել-խմելով նշեցինք Մարիետայի ծննդեան օրը: Մեր իմբին էին միացել երեք լիբանանահայ երիտասարդներ, որոնց խոստացել էի հնարաւորութեան դէպքում իրենց ներգրաւել իմ բի կազմում:

Առաւօտեան 11-ի կողմերը սրահ մտաւ ուսադիրներով մի պաշտօնեայ կին:

- Ո՞վ է ձեր իմբի ղեկավարը, խնդրում եմ մօտենալ:

- Ես եմ յարգելի տիկին, լսում եմ ձեզ,- ասացի ես:

- Ձեր բախտը բերել է,- մի տեսակ շոյուած իմ պատասխանից,- Ժպիտով ասաց ու շարունակեց,- Սոչի թուշոյ օղանաւը հանուած է չուերթից եւ տրամադրուած է միայն ձեր իմբին: Քանի՞ հոգի է խումբը:

- 46, յարգելի կապիտան,- պատասխանեցի:

- Ձեզ քսան ըոպէ ժամանակ հաւաքուէք: Ես կը գամ ձեր ետեւից:

Անկարագրելի հրճուանք, ուրախութիւն: Յստակ էր, որ այս ամէն պատմութեան մէջ իմ Արտաշէսի մատը խառն էր:

Երեւանի օդակայանում՝ դիմաւորողների հսկայ խումբ: Ծաղկեփմջերի տօնահանդէս: Մթնոլորտը փոքր-ինչ խաղաղուելուց յետոյ ինձ ու Մարիետային են մօտենում Արտաշէսը եւ շքեղ ծաղկեփունջը ձեռքին Ջուլիետան: Հարազատից էլ աւելի հարազատ դարձած մեր աննման զոյգը: Խօսքեր չկան, միայն գրկախառնութիւն ու արցունքոտ աչքեր: Բաժանուելիս Արտաշէսն ասաց.

- Հենրիկ, վաղը Ապրիլի 10-ն է չէ՞, քո ծննդեան օրը: Նշում ենք մեր տանը: Մի տաս հոգով հաւաքուէք եկէք: Այդ վայրկեանին մեզ մօտե-

ցաւ սանիկա՝ Ռուբիկո:

- Արտաշէս ջան, ծանօթացիր խնդրեմ սանիկա է, շատ լաւ գիտի եղբորդ:

- Ուրեմն նրան էլ նկատի առ:

Դա մի սովորական ծնունդի երեկոյ չէր: Ասմունք, երգ, հումոր, յիշողութիւն ու ճոխից էլ ճոխ սեղան՝ ընդգծուած հիւրասիրութեամբ: Բազում կենացներ: Կէսգիշերն անց էր, ուզում ենք վեր կենալ, Արտաշէսը թէ՛- մի կենաց էմ առաջարկում՝ ով չիմի՞ թող աշխատավարձի յոյսին մնայ...

Համընդհանուր ծիծաղը մոռացնել տուեց կենացը փոքր-ինչ օրորուող իմ քաղցր, հեզ ու բարի ընկերոջը, որի արդիւնքում մի կէս ժամով էլ երկարեց այդ չքնաղ երեկոն:

Դա իմ վերջին հանդիպումն էր Արտաշէսի հետ:

Ես եւ իմ երգչախումբը դարձեալ հրաւիրուած էինք 1991-ին համերգներ տալու Երեւանում: Ես խօստացել էի մինչ գնալը հրաւեր ուղարկել Արտաշէսին, որպէսզի գայ Լոս Անջելէս՝ սրտի վիրահատութեան համար: Մենք արդէն որոշ կարգադրութիւններ արել էինք այդ ուղղութեամբ: Ես հրաւերն ուղարկեցի անձի միջոցով, ու անմիջապէս հեռաձայնով տեղեակ պահեցի նրան մեր խօսակցութեան յաջորդ օրը նրան են յանձնում այնքան սպասուած ծրարը:

- Եւ ի՞նչ..., հրաւերը ստանալու հրճուանքին ու բերկրանքին չի դիմանում իմ լա՛ւ, բարի ընկերոջ՝ Արտաշէս Քալանթարեանի տանջուած ու չարչրկուած սիրտը ու նա մահանում է 1991 թ. Փետրուար 23-ին:

Արտաշէսի մահից յետոյ տարիներ շարունակ շարունակուեցին մեր յարաբերութիւնները իր կնոջ եւ զաւակների հետ: 1996-ին Մեր տանը երկու շաբաթով հիւրընկալեցինք կնոջը՝ Ջուլիետային, որին մտերմաբար արդէն Ջուլիկ էինք անուանում: Բացի դրանից, Ջուլիկը մի քանի անգամ մէկ-եկու օրով իջեւանում էր մեր տանը՝ աւագ որդու՝ Արտակի մօտ, Սիաթլ գնալու ճանապարհին:

Ես ու Մարիետան էլ տարիներ առաջ մէկ շաբաթ վայելել ենք Սիաթլի հանրաճանաչ Microsoft ընկերութեան մէջ մեծ պաշտօնի տիրացած Արտակի հիւրընկալութիւնը:



Հովանավորությամբ՝

Ս. Դ. Հ. Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի  
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան  
135-Ամյակի Նուիրում

# ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

**ARMENIAN NATIONAL & ETHNOGRAPHIC SONGS**

Sponsored by: **S. D. H. P.** Western American Committee

Dedicated to 135<sup>th</sup> Anniversary

With the participation of:

**Մասնակցությամբ՝**



**ԱՌՆՈ ՄԿՐՏՉԵԱՆ**  
**ARNO MKRTCHYAN**



**ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈԲՅԱՆ**  
**HARUT HAGOPYAN**

*The event will take place on  
Saturday, June 25, 2022,  
Starting from 7:00 p.m.  
At AEBU Center*

*Տեղի կ'ունենայ Շաբաթ Յունիս 25, 2022-ին  
Երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ  
Հ.Կ.Բ.Մ.-ի շքեղ սրահէն ներս՝  
1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104  
Տեղերը ապահովելու համար՝ Հեռ. 626-429-2815*

*Մուտքի նուէր՝ \$75*